

Դ

ԵՏՀՐԱՏԻ
ԵԺԱՆԱԳԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

№ 159 - 160

№ 159 - 160

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ԱՐՏԻՍՏԸ

891.99

Հ - 66

ԳԵՂԱՔՈՒՅՈՒՆ - 1938

U.S.

317

ՊԵՏԱԿԱՆ ԵԺՈՒՍՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 159—160

№ 159—160

ՀԻՐՎԱՆԶԱԴԵ

891.99
8-66

եր

ԱՐՏԻՍՏԸ

ԽՈՐՀԵՂՄԵԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Յերևան—1938

15 JUL 2013

98241

- 6 NOV 2011



۱۶۴۶

39

Հինգ ամիս եր ընդամենը Ռդեսսայումն
ելի, չորրորդ անգամ փոխեցի սենյակս:
Փոքր ի շատե մեծ քաղաքում բնակվող մե-
նակեցի համար մի առանձին հաճույք և
ստեղ-ստեղ կացարան փոխելը: Անցնելով
մի թաղից մյուսը, կարծում ես մի յերկրից
մյուսն անցար: Նոր հարեանություն, նոր
միջավայր, յերբեմն այլ կենցաղով ու վո-
դով:

Այս անգամ պիտի բնակվելի քաղաքի
աղմկալի փողոցներից մինում, հինգհարկանի
մի տան յերրորդ հարկում։ Տանտիրուհիս ի-
տալուհի յեր, զեր, առողջ, ամրակազմ մի
այրի մոտ հիսուն տարեկան։ Նրա ամուսինը
յեղել եր իտալական ոսկերայի հուշարձ-
շատ վաղուց հայրենիքից տեղափոխված
թուսաստան։ Մեռնելով՝ կնոջ ու միակ դըս-

տեր համար թողել եր իբրև ժառանգություն
հին նոտաների մի մեծ կապոց և խտալացի
արտիստների ծանոթությունը։ Այրին, ապ-
րելու ուրիշ միջոց չունենալով, պարապում
եր սենյակներ վարձու տալով։

Հենց առաջին որն յես ծանոթացա հա-
րեաններիս հետ։ Այդ ինձ համար նոր և բա-
վական հետաքրքրական ըրջան եր։ Նա բաղ-
կացած եր մեծ մասամբ խտալացիներից։ Կար
եւ մի ոռւս ուսանող ու մի հրեուհի ատամ-
նաբուժ, բավական գեղեցիկ, թեև վոչ այն-
քան թարմ։

Կենտրոնը կազմում եր տանտիրուհու
դուստրը՝ շիկահեր, փղոսկրի պես փայլուն,
ժաքուր ատամներով և գեղեցիկ աչքերով
քսան տարեկան լուիզան։ Նա յերգում եր
ուներ զորեղ ու անուշ ձայն, պատրաստվում
եր բեմին նվիրվելու։ Գիտեր նվագել դաշնա-
մուր, յերաժշտության դասեր եր տալիս,
փող ժողովում, վոր դնա խորակա ձայնը
մշակելու։

Առաջին որն անծանոթ շրջանում զգացի
սովորական անհարմարություն, յերկրորդ
որն ընտելացա, իսկ մի շաբաթ անցած՝ բա-
վական բարեկամացա բոլորի հետ։ Մենք ճա-
շում եյինք միևնույն սենյակում, միաժամա-
նակ, միևնույն սեղանի քով։ Յերկու ժամից
սկսած մինչև յերեկոյան չորս-հինգ ժամը
ծիծաղ, յերգ, նվագում, պար ու սրախոսու-
թյուններ խառնվում եյին միմյանց և ջեր-
մացնում տարրեր ազգերի ու դավանություն-
ների պատկանող մարդկանց բարեկամական
մթնոլորտը։

Մի որ ճաշից հետո լուիզան նստեց
դաշնամուրի քով և սկսեց նվագել ինչ-վոր
վայլս։ Բասո-կոնտատո Զելինին գրկեց
կոնտրայլտո լուկրեցիա Կաֆարելլիին ու
սկսեց պարել։ Բարձրացավ ընդհանուր ծի-
ծաղ, վորովհետեւ իրավ վոր այդ մի զվար-
ճալի զույգ եր. Զելինին իիստ նիշար եր և
շատ բարձրահասակ, լուկրեցիա Կաֆարելլին,
ընդհակառակը, իիստ գեր եր և կարճահա-

սակ: Լուիզան նվագելով հանդերձ գեղեցիկ գլուխը ձգել եր հետ և անդուսպ քրքջում եր, լեցնելով սենյակը յուր անուշ ձայնի հյութալի հնչյուններով:

Զվարճության տաք միջոցին դռների մեջ նկարվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք: Վոչ վոք առաջին պահ չնկատեց նրան, բացի ինձանից, վոր նստած եյի դռների մոտ: Անծանոթը հենց առաջին վայրկենից գրավեց ուշադրությունս: Յես դիտեցի նրան: Մոտ 16—17 տարեկան մի պատանի յեր նիհար, գունատ դեմքով, կուրծքը փոքր ինչ ներս ընկած: Հագած եր մուգ-կապտագույն գոտենոր կարծ բաճկոն, վորի կուրծքը զարդարված եր ասրյա խաչաձև ծոպերով, և նույն գույնի նեղ վարտիք: Չեռին բռնած եր մի կակուղ կանաչագույն ուլիսարկ փետուրով զարդարված, նման այն գլխարկներին, վոր դնում են թափառաշրջիկ հույն անդրիավաճառները կամ իտալացի յերաժիշտները: Նբա դեմքի գծերը կանոնավոր եյին ու նուրբ, աչքերն ունեյին ինչ-

վոր մելամաղձիկ արտահայտություն: Դա այն յերջանիկ դեմքերից եր, վորոնք հենց առաջին հայացքով մարդու սրտում շարժում են համակրության զգացում:

— Բոն-ջուրնո, — ասաց նա, ուլույս՝ տալով:

— Ոհո՞, արտի՛ստը, — դոչեց ամենքից առաջ բարիտոն կավալարոն, վոր մի բարեսիրու մարդ եր մոտ յերեսուն ու հինգ տարեկան:

— Արտի՛ստը, արտի՛ստը, — կը կնեցին մյուսները:

Նույն վայրկենին պար, նվագում, ծիծաղ ընդհատվեցին, և բոլորի հայացքները դարձան դեպի պատանին:

— Վո՞րտեղ եյիր, այսքան ժամանակ չեյիր յերեսում, — հարցրեց կավալարոն:

— Սպասեցեք, նա տիսուր ե, — դոչեց Լուիզան և մոտեցավ պատանուն: — Ելի ի՞նչ ե պատահել, ի՞նչու ներս չես մտնում:

— Վո՞րտեղ ե սինյորա Ստեֆանիան, —
Հարցրեց պատանին:

Նրա ձայնը հուզված եր, դողում եր:
Կար այդ ձայնի մեջ մի սրտաշարժ շեշտ,
Վոր արտահայտում եր հեղության հետ և
թալիծ:

— Ա՛ա, հասկացա, — ասաց Լուիզան, —
Ելի մայրէ, յերեխ, հիվանդ ե: Խե՞ղճ պա-
տանի, դու սլանում ես յերկինք, նա կպած ե
յերկրին...

— Սինյորինա Լուիզա, յես ձեղ խնդրում
եմ ինձ չխղճալ, — դոչեց պատանին վիրա-
վորված, — սինյորա Ստեֆանիան այստեղ
չե՞:

— Մայրս խոհանոցումն ե:
Պատանին գլուխ տվեց շնորհալի ձեռվ
ու հեռացալ:

— Նա չափազանց տխուր եր, — ասաց
Կավալարոն, — անշուշտ մայրն այս անդամ
ծանր հիվանդ ե:

— Զեմ կարծում, — նկատեց Լուիզան, —

այդ կինը միշտ հիվանդանում ե վորդուն
տանջելու համար: Խե՞ղճ պատանի...

— Խե՞ղճ, — կրկնեց ոռւս ուսանողը կծու
հեղնությամբ, — բայց նա չի ուզում, վոր
դուք նրան խղճաք, սինյորինա Լուիզա: Տե-
սա՞ք, ինչպես վիրավորվեց:

— Նա հպարտ ե ինչպես սպանական
գրանդ, — ասաց Կավալարոն, յուր բարի
աչքերը թանձր ունքերի տակից դարձնելով
դեպի ինձ, — և հպարտությունը սազում ե
նրա հեղությանը: Սինյոր, նրա կերպարանքն
ինձ միշտ հիշեցնում ե իմ յեղբորը: Տաղան-
դավոր ջութակահար եր, մեռավ քսան տա-
ռեկան հասակում թևերին վրա:

— Դուք ճանաչո՞ւմ եք Լեոնին, — դիմեց
ինձ որիորդ Ռախիսան, Հրեուհի ատամնա-
բուժը:

— Վո՞չ: Յերեակայեցէք, հարեաններ,
պարոնը մեր արտիստին չի ճանաչում:

— Ո՞ս, այդ աններելի յե, — դոչեցին
Լուիզան ու Լուկրեցիս Կաֆարելին:

— Իմ կարծիքով, — ասաց կալվարոն, —
ով դեղարվեստասեր ե, իրավունք չունի
Լեռնին չճանաչելու: Նա իսկական արտիստ ե,
այո՛, հոգով, սրտով, արյունով, ամբողջ
եյությամբ արտիստ:

Իմ ՀԱՄԱՔՐԱՊՈՒԹՅՈՒՆԸ բոլորովին
գրգռվեց: Ո՞վ ե, վերջապես, այդ մանուկը,
վոր այդքան զրավել եր հարեաններիս
համակրանքը:

— Յեթե կամենում եք, իսկույն կծա-
նոթանաք, — ասաց Լուիզան. — արժե այ-
ցելել նրան յուր ապարանքում: Գիտե՞ք
ինչ, — դարձավ նա ընդհանուրին, — վատ
չի լինիլ, յեթե խմբովին գնանք մեր ար-
տիստի հիվանդ մորը տեսնելու: Այո՛, վատ
չի լինիլ... Յես գնում եմ, ով ուզում ե,
թո՛ղ հետեւ ինձ:

Այս ասելով, նա անմիջապես դիմեց դե-
պի գոները: Բացի ուսանողից և յերկրոր-
դական բարիտոն Բոբելիից, բոլորս հետե-

վեցինք նրան, նույնիսկ հաստատամարմին
Լուկրեցիա Կաֆարելլին:

Արտիստը բնակվում եր նույն տան վե-
րին հարկում: Լուիզան մեզ առաջնորդեց
դեպի գլխավոր սանդուղը, բարձրացանք
չորրորդ հարկը: Այնտեղից նեղ, կեղոստ,
փայտյա սանդուղով հասանք հինգերորդ
հարկը, մտանք մի մթին անցք: Անմիջապես
խփեց մեր քթին ճարպի մեջ տապակվող
մսի անախորժ հոտը:

Լուիզան կանդ առավ մեկթևանի մի
ցածը դռան առջև:

— Սինյոր Զելինի, — ասաց նա, — ձեզ
համար պիտի առաստաղը մի Փուտ բարձ-
րացնել:

— Իսկ սինյորինա Կաֆարելիի համար
դռները պիտի յերկու Փուտ լայնացնել, —
հեղնեց Զելինին կոնտրայլտոյի մարմնի հաս-
տությունը, գրկելով յուր յերկայն թևով
նրա իրանը:

Մենք մտանք մի սենյակ, վոր մի փոքր

մեծ եր, քան մի մեծ հավաբուն։ Այստեղ,
մութ անկյունում, պատի տակ յերեւում եր
ինչ-վոր բան, նման անկողնակալի թե թախ-
տի՝ չգիտեմ։ սինյորա Ստեֆանիայի
հաղթանդամ մարմինը թաղյնում եր նրան
իմ աչքից։ Մի քայլ առաջ գնալով, տեսա
հնամաշ վերմակի տակ պառկած մի կնոջ
դեմք։ Նրա ճակատը կատած եր սև թաշկի-
նակով, աչքերը հառած առաստաղին։ Նա
տնքանքում եր ու ծանր հառաջում։ Նրա
վոտների կողմում կանդնած եր «արտիստը»։
Բատ յերեւութին, նրա միտքը կլանված եր
կամ մոր հիվանդությամբ կամ մի ուրիշ
հոգսով, վորովհետեւ մեր յերեալը աննկա-
տելի մնաց նրա համար։

— Դե լա՛վ, քիչ տնքտնքա, — ասում եր
սինյորա Ստեֆանիան հիվանդին, — չես
մեռնում, մի վախենար։ Սոլորական հիվան-
դությունդ ե, ելի, վաղը կանցնի։ Բա-բա-բա,
տե՛ս, մոտղ ինչ պատվավոր հյուրեր են յե-
կել։ Համարյա իմ բոլոր կավալերներն ու

դամերը։ Տղա, — դարձավ նա Լեռնին, —
յերեկի, այդ դու յես անհանդստացրել մարդ-
կանց։

Պատանին նայեց մեղ, չափազանց շփոթ-
վեց և շտապեց սենյակի ընդամենը մի զույշ
ջարդված աթոռներն առաջարկել յոթ հյուրե-
րից չգիտեր վո՛ր մեկին։

— Պարոնը բժի՞շկ ե, — հարցրեց հիվան-
դը, յերբ տեսավ ինձ։

— Բժիշկ չե, — պատասխանեց սինյորա
Ստեֆանիան, — բայց յերեկի, ցավդ բժշկից
լավ կհասկանա։ Քո հայրենակիցներից ե...

— Հա՞յ, — գոչեց հիվանդը զարմանալով
թե ուրախանալով չգիտեմ և, գլուխը դան-
դաղ բարձրացնելով, նստեց անկողնում։

— Հա՞յ, — կրկնեցի յես զարմացած, վո-
րովհետեւ ինչ ազդի ասես սպասում եցի այդ
միջավայրում, բացի հայից։

— Այօ՛, — ասաց որիորդ Ռախիսան, — ար-
տիստը ձեր հայրենակիցն ե. զարմանալի յե,
վոր չիմացաք հենց առաջին տևանելուց։

դամերը: Տղա, — դարձավ նա Լեռնին, —
յերեկ, այդ դու յես անհանդստացրել մարդ-
կանց:

Պատանին նայեց մեղ, չափազանց շփոթ-
վեց և շտապեց սենյակի ընդամենը մի զույգ
ջարդված աթոռներն առաջարկել յոթ հյուրե-
րից չդիտեր վո՛ր մեկին:

— Պարոնը բժի՞շկ ե, — հարցրեց հիվան-
դը, յերբ տեսավ ինձ:

— Բժիշկ չե, — պատասխանեց սինյորա
Ստեֆանիան, — բայց յերեկ, ցավդ բժշկից
լավ կհասկանա: Քո հայրենակիցներից ե...

— Հա՞յ, — գոչեց հիվանդը զարմանալով
թե ուրախանալով չդիտեմ և, գլուխը դան-
դաղ բարձրացնելով, նստեց անկա-
տելի մնաց նրա համար:

— Դե լա՛վ, քիչ տնքտնքա, — ասում եր
սինյորա Ստեֆանիան հիվանդին, — չես
մեռնում, մի՛ վախենար: Սովորական հիվան-
դություններ, ելլի, վաղը կանցնի: Բարաբար,
տե՛ս, մոտդ ինչ պատվավոր հյուրեր են յե-
կել: Համարյա իմ բոլոր կավալերներն ու

— Դե լա՛վ, քիչ տնքտնքա, — ասում եր
սինյորա Ստեֆանիան հիվանդին, — չես
մեռնում, մի՛ վախենար: Սովորական հիվան-
դություններ, ելլի, վաղը կանցնի: Բարաբար,
տե՛ս, մոտդ ինչ պատվավոր հյուրեր են յե-
կել: Համարյա իմ բոլոր կավալերներն ու

— Հա՞յ, — կրկնեցի յես զարմացած, վո-
րովհետեւ ինչ ազդի ասես սպասում եյի այդ
միջավայրում, բայցի հայից:

— Այսո՛, — ասաց որիորդ Ռախսան, — ար-
տիստը ձեր հայրենակիցն ե: զարմանալի յե-
կոր չխմացաք հենց առաջին տեսնելուց:

— Վո՞րտեղացի յեք, — հարցրեց հիվանդը, — Բեսարաբիայից չե՞ք: Վո՞չ: Ո՞ո, այդ շատ լավ ե, շատ լավ: Ո՞ֆ-ոՓ-ոՓ, Բեսարաբիայի հայերը աստված չունին, գաղաններ են, չեն ուզում ցավս հասկանալ: Տե՛ր աստված, վոչ վոք ցավս չի հասկանում, վոչ վոք:

— Ելի մի' սկսիր հին յերգել, — գոչեց սինյորա Ստեֆանիան, — բավակա՞ն ե:

— Վո՞չ, Ստեֆանիա, չեմ կարող լոել, սիրու այրվում ե: Դու ել մայր իս, բայց զավակդ տղա չե: Ո՞հ, յերանի իմն ել աղջիկ լիներ: Զգիտես, ինչ ե անում նա: Հոր նման տանջում ե ինձ: Պարոն, — գարձավ ինձ, — այդ փչացածն իմ միակ տղան ե, հասկանո՞ւմ եք, միակ, ուրիշ զավակ չունիմ: Աստված սիրեք, խելքի թերեք նրան: Նա հոր ճանապարհով ե գնում . . .

— Սովորական գանգատներ են, — շշնջաց ականջիս Լուիզան, — ուշադրություն մի դարձնեք:

Յես նայեցի Լեռնին: Ամաչելուց նա յերեսը դարձրել եր պատին, մեղ չեր նայում:

Լուիզան մոտեցավ նրան, բռնեց ձեռներից, յերեսը դարձրեց յուր կողմը, ուղիղ նայեց աչքերին բարեկամական — վո՞չ, ավելի՞ — սիրող քրոջ քնքույշ հայացքով: Ինձ թվաց, վոր այդ հայացքը թափանցեց մինչև Լեռնի հոգու խորքը: Յեվ ո՞ւմ հոգու խորքը չեր թափանցիլ այն: Լեռնը զվարթացավ և յերախտագիտության զգացումով լեցուն աչքերով նայեց իտալուհու յերեսին:

— Յեթե որինավոր վորդի լիներ, — շարունակեց հիվանդը, — ձեղ նման պատվավոր հյուրերին այսոր այս խոպանում կընդունե՞մ: Տեսնո՞ւմ եք, աթոռներ ել չունինք: Անամո՞թ, ի՞նչ ես ցցվել փայտի պես: Զե՞ս տեսնում հյուրերիս:

Լեռնը կրկին անգամ սենյակի մի զույգ աթոռներն առաջարկեց մեզ: Նստել անկարելի յեր. այդ փոքրիկ սենյակում յոթ-ութ հոգի կանգնել միայն կարող ելին: Լուկրեցիա

Կաֆարէլլին յերկար չելմացավ ողի սակավությանը, դուրս գնաց: Զելլինին հետեւվեց նրան, ասելով թե «արտիստի» մայրը մեռնելու ախորժակ չունի դեռ, կարիք չկար անհանդստանալու:

Նրանց դուրս գնալուց հետո սենյակն այնչափ գոնե ազատվեց, վոր յես կարող եյի դիտել շուրջս: Այն, ինչ վոր տեսա, ինձ հաճելի զարմացում պատճառեց: Մի անկյունում կախված եյին աշխարհիս անվանի յերաժշտապետների, նվագիչների, յերգիչների ու յերգչուհիների լուսանկարները հովհարի ձեռվ միմյանց միացրած: Մյուս անկյունում դրված եր մի փոքրիկ դրասեղան, ծանրաբեռնված գանազան եժանագին գեղարվեստական իրերով: Այնտեղ տեսա Բեթհովենի, Մոցարտի, Շեքսպիրի և Վագների կալյա կիսարձանիկները աղյուսի գույնով, մի հաստ խեցեղեն շվի, մի կոտրված սրինդ և ուրիշ այդպիսի պարագաներ: Սեղանի առաջին պատից կախված եյին մի կիթառ, մի մանդուկ-

նա և մի ինչ-վոր թատրոնական զգեստ՝ նման Ռիգոլետտոյի հագուստին: Ամենահետաքըրք-քրականը մի նկար եր պոլիտրայի վրա, վոր ներկայացնում եր յերկու պատանիների մենամարտությունը բռունցքներով մի փողոցային յերգչուհու համար: Աղջկն ընկել եր մեջտեղ գղղղված մաղերով և աշխատում եր բաժանել ափոյաններին...

— Տեսնո՞ւմ եք, — շշնչաց ականջիս Կավալարոն, — յերաժշտություն, նկարչություն, պոեզիա, վոչինչ չի մոռացված:

25 Այդ միջոցին հիվանդը շարունակում եր գանգատվել.

— Ահա յերեք որ ե, առավոտներն ել յերեսը չեմ տեսնում: Նա չի քնում, Ստեֆանիս, չի քնում: Զե՞ վոր կարող ե հիվանդանալ, հետո յես ի՞նչ անեմ, ո՞վ կզահի ինձ: Գիշեր-ցերեկ թատրոններումն ե: Հոր ցավը վորդուն ե անցել: Անիծվի նրա գերեզմանը, որս սևացրեց:

— Ե՛ս միենույն գանգատաները, — ար-

տասանեց կուիզան, — և ի՞նչպէս չի հոգնում
այդ կինը: Յեսամո՛ւլ...

Արդարեւ, հիվանդի աչքերի մեջ յերեսում
եր յեսամոլի հողի, թեև գեղեցիկ եյին այդ
աչքերն և դեռ բավական վառվոռուն մոտ հի-
սուն տարեկան կնոջ թառամած դեմքի վրա:

Հրաժեշտ տալիս նկատեցի մի բան. Կա-
վալլարոն թագուն կեռնի ձեռի ափի մեջ
սեղմում եր մի վոսկեդրամ, պատանին հրա-
ժարվում եր ընդունել: Այդ ժամանակ բա-
րիտոնը քայլերը դանդաղեցրեց, մնաց սե-
նյակում, թույլ տալով, վոր կեռնը մեզ ու-
ղեցի:

Սինյորա Ստեֆանիան համառոտ պատ-
մեց ինձ կեռնի մասին Հւտեյալը: — Նրա
հայրը յեղել ե թատրոնական վարսավիր և
չափազանց գեղարվեստասեր: Համեստ, գլու-
խը քաշ արհեստավորը հանկարծ անձնատուր
ե լինում հարբեցողության կործանիչ ախտին
և վոչ առանց պատճառի: Պարզվում ե, վոր
նա անհույս սիրահարված ե մի յերդչունու

վրա: Կուլիսների հետեւում շուտով նա դառ-
նում և ընդհանուր կատակների ու ծաղրի ա-
ռարկա: Արտիստներից սկսած մինչև վերջին
թատրոնական ծառան ծիծաղում են նրա
հանդուգն զդացման վրա դեպի մի գեղեցկու-
հի, վորի յերկրպագուների թվում անվա-
նում են նաև տեղական քաղաքագլուխ, հայտ-
նի միլիոնատեր ու բարեգործ հույն Մարագ-
լին...

Հալածանքն ու ներքին վիշտը ներդոր-
ծում են վարսավիրի վրա այնչափ, վոր սըր-
տի դառնությունն ողու մեջ չի կարողանում
խեղդել: Մի որ նա ծեծում ե ռեժիսորին,
վոր ծաղրելիս և լինում նրա շինած մի կեղ-
ծամը, անվանելով նրան «սրիկա»: Նրան
զրկում են թատրոնական վարսավիրի պաշտո-
նից: Այդ ժամանակից նա դառնում ե ողու-
և փողոցների անդառնալի սեփականու-
թյուն: Յեկ մի յերեկո վոստիկանները գըտ-
նում են նրան մի ծառի տակ, ձյունի մեջ
թալալված, բերում են տուն: Յերեք որ

չանցած՝ մեռնում եւ տիֆից, թողնելով կնոջն
ու գավակին ճակատագրի հաճույքին:

Այրին, ամուսնու արհեստից զզված ու
տանջված, ութ տարեկան լևոնին հանձնում
ե մի ատաղձադրծի և ինքը սկսում ուրիշնե-
րի համար ճերմակեղեն կարել: Յերկու ամիս
չանցած՝ մանուկն արհեստանոցից փախչում
ե ուսումնաբան: Բարի մարդիկ տալիս են
նրա ուսումնավարձը: Նա սովորում ե գրել-
կարդալը: Այրին հանձնում ե նրան հագուս-
տեղենի վաճառատուն: Մանուկը չի մնում
այստեղ: Մի աներեւույթ ճեռք մղում ե նը-
րան գեղի թատրոն: Նա դառնում ե աֆիշ-
ներ բաժանող որական հիսուն կոպեկով և
թատրոնների վերնահարկը բարձրանալու ի-
րավունքով:

Անցնում ե կուլիսների հետեւ, կամաց-
կամաց ծանոթանում ե արտիստական աշ-
խարհի հետ: Այժմ բոլոր արտիստները ճա-
նաչում են նրան, բոլորին նա ծառայու-
թյուններ ե անում ե բոլորը սիրում են նրան

յուր հեղության և աշխուժության համար:
Նա վոչ մի ներկայացում բաց չի թողնում,
մահավանդ իտալական խմբի ներկայացում-
ները: Նա ցերեկներն ել թատրոնումն ե կամ
նրա շուրջը:

— Սինյոր, կղարմանաք յեթե ասեմ, վոր
այժմ նա յերբեմն ստեղծում ե նորեկ անծա-
նոթ արտիստի համար փառք մեր քաղաքում,
— շարունակեց մոր փոխարեն Լուիզան:
— Այո՛, այո՛, սինյոր Զելլինի, մի՛ հակառա-
կեք, այս ճիշտ ե: Նա ունի բազմաթիվ հույն
ու հրեա լնկերներ, վորոնք զարմանալի հա-
վատ ունին դեպի նրա ճաշակը և բիրում են
նրան: Դրանք կլակյորներ չեն, վո՛չ, այլ
թատերասերներ: Զգիտեմ, գուցե նրանք կա-
շառվում են, բայց լևոնը՝ վո՛չ, յերեք չե-
կարելի նրան կաշառել: Սինյոր կավալարո՛,
Ճիշտ եմ ասում, թե վոչ:

— Նա աղնիվ ե վորակս նորածին և զգա-
յուն՝ վորակս քնարի լար, — արտասանեց

բարիտոնը: — Նա իմ հանդուցյալ յեղբոր
տիպալն ե...

— Բայց ի՞նչպես ե ստեղծում անծանոթ
արտիստի համար փառք, — Հետաքրքրվեցի
յես:

— Առաջին ծափահարությամբ, — պա-
տասխանեց կալվարոն:

— Չեմ հասկանում, — ասացի յես:

— Սինյոր, յերեի չգիտեք՝ ինչ ասել ե
արտիստի համար առաջին ծափն անծանոթ
քաղաքում: Շատ բան, յերբեմն ամեն ինչ:
Դուք թատերասեր եք, նկատած կլինեք մի
յերեւություն: Թատրոնական սրահում նստող
հասարակությունը հաղիվ ե վստահանում
առաջին ծափը տալ անծանոթ արտիստին:
Շատ անդամ, հոգով հիացած յերգչի յեր-
դով, նա ամաչում ե յուր հիացումը արտա-
հայտել. կարող են նրան անծաշակ համարել:
Բայց ահա ոգնության ե հասնում Լևոնը:
Նա ազատ ե հասարակական նախապաշտ-
ումներից, չի քաշվում առաջին ծափը տալ:

Խումբը հետևում ե նրա որինակին: Այն ժա-
մանակ հասարակությունը նույնպես ծափա-
հարում ե: Մյուս որը լրագրուերը գրում էն
այդ ծափահարությունների մասին, և ահա
անծանոթ արտիստի աջողությունը ապա-
հով ե:

— Յեթե, իհարկե, արտիստը չնորհք ու-
նի, — ավելացրեց Զելլինին:

— Այո՛, իհարկե:

— Բայց քո Լևոնը կարող ե շատ անդամ
անշնորհին ել տալ առաջին ծափը, — նկա-
տեց Բորելլին:

— Ներողություն, — պատասխանեց կա-
վալվարոն, հեղնորեն ժպտալով, — մեր խմբի
վերաբերմամբ գոնե նա դեռ այդպիսի սխալ
չի գործել:

Յես գուշակեցի, վոր Բորելլին դեռ չի
արժանացել Լևոնի ծափին:

Վիճարանությունը գուցե շարունակվեր,
յեթե կրկին ներս չմտներ Լևոնը: Այս անդամ
նրա դեմքը բավական հանդիստ եր: Նա հրա-

վիրեց Կավալլարոյին մի անկյուն և, շշնջա-
լով ականջին, բաց թողեց նրա գրպանը մի
վոսկեղբամ: Հետո խմացա, վոր մեր զուրս
գալուց հետո նա իր մոր բարձի տակ գտնում
և այդ դրամը: Հասկանում ե, վոր Կավալ-
լարոն պիտի դրած լինի, վերցնում ե, բե-
րում, վերադարձնում տիրոջը:

— Համառ ես, Լեռն, համառ,— գոչեց
Կավալլարոն, ըյելով պատանու գլուխը
հայրական սիրով:— Դե լավ, մի նեղանար,
նստի՛ր, մի փոքր խոսենք: Դու, իհարկե,
յերեկ թատրոնումն եյիր:

- Եյի:
- Հավանեցի՞ր ինձ . . .
- Իհարկե:
- Ապա ինչո՞ւ յերեսդ դարձնում ես
ինձանից . . . Ա՛մ, կեղծո՞ւմ հս . . .
- Սինյոր Կավալլարո, յերեկ դուք
շիոթված եյիք:
- Ցե՞ս. ամենեին: Միսալվում յես:
- Վո՞չ, սինյոր, չեմ սիսալվում: Ցերը

հանգիստ եք, յերբեք չեք չեղվում: Մենք ա-
մենքս իմացանք, վոր ձեզ բարկացրել են:

— Քեզ այդպես ե թվացել: Վոչ վոք
ինձ չեր բարկացրել: Ահա տեսա՞ր, Լեռն,
ինձ դեռ լավ չես ճանաչում:

Լեռնը նայեց Կավալլարոյի աչքերին
այնպիսի պարզ ու խելոք հայացքով, վոր
կեղծել նրա մոտ անկարելի յեր: Կավալլարոն
ձեռը դնելով նրա ուսին, ասաց.

— Զես սխալվում, բարեկամս, յերեկ
ներկայացումից մի քիչ առաջ յես խոչոր վեճ
ունեցա սեժիսյորի հետ:

— Վո՞չ, սինյոր Կավալլարո, ասացեք՝
դիրիժյորի հետ,— ուղղեց Լեռնը համար-
ձակ:

- Դու վո՞րտեղից իմացար:
- «Ո՛ Կառլո»—ն յերգելիս՝ սինյոր Մար-
տինին կես տոն բարձր վերցրեց ձեզ չեղելու
համար: Սինյոր Մարտինին բոլորի վերաբեր-
մամբ անաչառ ե, բացի իրանից: Ոեժիսյորի
պատճառով նա ձեղանից վրեժ չեր առնիլ:

Մի քանի հարցեր տվեցի նրան պարզ հայերեն լեզվով: Նա ասլշած նայեց յերեսիս և ժպտաց:

— Զե՞ս Հասկանում, — դարձավ ինձ Կավալլարոն վողեռորշած, — այս պատահութերանով խոսում ե ինքը յերաժշտական բնագը: Եփտողական ձիրքը:

— Այդ լեզուն յէկեղեցական ե, — խոսեց նա տաճկերեն լեզվով, — իմ իմացած Հայերենն ահա այս լեզուն ե:

Ինձ համար նորություն չեր Բեսարաբիայի Հայերի մայրենի լեզու չիմանալը: Բայց առաջին անգամն եյի պատահում մեկին, վոր տաճկերենը հայերեն եր համարում:

Յես խնդրեցի Լեռնին այցելել շուտ-շուտ և իմ կողմից խոստացա այցելել նրան:

Նա ինձ յերկար սպասել չտվեց: Հետեւ վյալ որն իսկ յեկավ սենյակս և ուրախ-ուրախ հայտնեց, թե մայրն արդեն առողջանում է: Ուղիղն ասած, յես չեյի հետաքրքրվում մոր վիճակով, ինձ զբաղեցնողը վորդու ճակատագիրն եր:

Յերբ խոսք բաց արի թատրոնի ու յերա-

Նա քինախնդիր ե միայն յուր անձնական հակառակորդների դժմ:

— Լսո՞ւմ եք, սինյոր, — դարձավ ինձ Կավալլարոն վողեռորշած, — այս պատահութերանով խոսում ե ինքը յերաժշտական բնագը: Եփտողական ձիրքը:

— Լեռնը վերկացավ, գլուխ տվեց, չնորհակալություն հայտնեց մեղ մեր այցելության համար և շտապեց դեպի դռները: Այլևս նա այնքան դրավել եր ինձ, վոր կամեցա անպատճառ հետը խոսել:

— Հայերեն գիտե՞ք, — հարցրի յես նրան մի որ, յերեի, Հայրենասիրական զգացումից դրդված:

— Գիտեմ:

Նա, ինչպես և յուր մայրը, խոսում եր ոռուսերեն լեզվով տաճկական արտասահությամբ: Իտալացիներից միայն տանտիրուհիս և նրա աղջիկը գիտեյին ոռուսերեն, նաև Կավալլարոն: Մյուսների հետ Լեռնը խոսում եր իտալերեն:

ժըշտության մասին, պատանին կերպարանա-
փոխվեց, ինչպես կրակոտ սիրահար, յեր
խոսվում ե նրա սրտի ընտրյալի վերաբեր-
մամբ: Վոգեռված նկարագրեց յուր լսած
յերեւելի յերգիչների ու նվագիչների տաղան-
դք: Վերջին յոթ տարվա ընթացքում նա լսել
ե գրեթե բոլոր նշանավոր յերգիչներին ու
նվագիչներին, վորոնք այցելել ելին Ռու-
սաստանն Ողեսսայի վրայով:

— Յերեխ, զու ել նվագում ես կամ
յերգում, — հարցրի յես:

— Վո՞չ, սինյոր:

— Զեմ հասկանում:

— Յերգելու համար ձայն չունիմ:

— Իսկ նվագելու համար գործիքներ
շատ ունիս սենյակումդ: Յերեկ տեսա:

— Այո՛, նվագում եմ մանդոլինա և կի-
թառ:

— Նոտաներ գիտե՞ս:

— Մինյորինա Լուիզան սովորեցրել ե:
Դուք լսե՞լ եք նրա յերգեցողությունը: Հիա-

նալի ձայն ունե: Այնպես չե՞՞ : Այո՞ : Հավա-
նե՞լ եք: Իհարկե, ո՞վ չի հավանիլ: Ո՞ո,
Լուիզային մեծ ապագա յե խոստանում...

Նա լոեց, հառաչեց, հայացքը ձգելով
դեպի անորոշ տարածություն: Յես նրա
դեմքի վրա նշմարեցի հոգեկան դադոնի տա-
ռապանքի արտահայտություն: Խոստովան-
վում լամ, այն ժամանակ նշանակություն
վում եմ, այն ժամանակ նշանակություն
պատճեցի նրա հառաչանքին: Յեկ մի՞թեն կա-
րող ելի յերեսակայել տասնույոթ տարեկան
պատճանու հոգին վորեե լուրջ վշտի ընդու-
նակ:

— Այդ բոլորը լավ, — ասացի յես, —
բայց գու ինչո՞վ ես կերակրում քեզ ու
մորդ: Չե՞ վոր հայրդ ժառանգություն չի
թողել:

— Գործ շատ կա, սինյոր: Պրոդրամներ
եմ ծախում, ստատիստի դեր եմ կատարում
բեմի վրա, պոչ եմ բռնում: Ա՞խ, սինյոր,
յեթե միջոց ունենայի, կսովորեյի վիսլոնչել
նվագել ու կմտնեյի յերաժշտական խումբը:

— Հիշո՞ւմ ես հորդ, Լևոն:
 — Իհարկե, շատ լավ եմ հիշում:
 — Ասում են, նա բարի մարդ եր:
 — Այո՛, սինյոր, շատ բարի յեր, մի-
 այն . . .

— Հարբում եր,— լրացրի յես պատահու
 խոսքը:

— Նա յերեք ինձ չեր ծեծում, չեր ել
 բարկանում վրաս: Բայց վո՛չ, մի անգամ
 բարկացավ, հիշում եմ . . .

— Յերեի, չարություն եյիր արել:

— Այո՛: Այն ժամանակ նրա խանութն
 ահա այն անկյունի կապույտ տան ներքին
 հարկումն եր: Ամեն որ գնում եյի այնտեղ
 կեղծամներ սանրում: Մի որ նա տխուր եր
 շատ: Մի ժեներալ յեկավ յերեսը սափրել
 տալու: Նրա մոտ միշտ մէծամեծներ եյին
 դալիս: Յես վերցրի մի սանր, վրեն քաշեցի
 մի թուղթ ու սկսեցի շրթունքներովս նվա-
 զել: Ժեներալը բարկացավ՝ ու հորս հրամա-
 յեց ինձ դուրս անել: Հայրս մոտեցավ, ա-

կանջս քաշեց ու, վղակոթիս տալով, վռնդեց
 դուրս: Բայց հետո, յեր ժեներալը գնաց,
 կանչեց ինձ ներս, աչքերս սրբեց, համբուրեց
 ու ասաց. «Յեթե դու կունենաս յերաժշտա-
 կան ընդունակություն, ինձ դրավ կդնեմ,
 քեզ չեմ թողնիլ առանց ուսման»: Այո՛,
 սինյոր, շատ լավ մարդ եր, թեև հարբում
 եր: Սինյոր, ներեցեք, վո՞ր ժամն ե:
 — Տանումեկ:

— Ո՞ո, յես ուշացա: Ներողություն, ելի
 կդամ: Ձեր սենյակը լավն ե: Դուք ինձ գըր-
 քեր կտաք կարգալու, այո՞ : Ենորհակալ եմ:
 Յտեսություն: Այսոր կալաֆատիի բենեֆիսն
 ե: Թատրոնը լիքն ե լինելու: Պետք ե գնամ,
 պոչ բռնեմ:

Յես կամեցա հարցնել՝ ինչ ասել ե «պոչ
 բռնել», բայց Լևոնն արդեն չքացել եր:

Կալաֆատին ընտիր յերգչուհի յեր:
 Գնացի թատրոն տոմսակ վերցնելու: Կատ-
 օի առջև կանգնած եր գնողների մի յերկայն
 չարք, վոր հասնում եր մինչև փողոցի կեսը:

— Հիշո՞ւմ ես հորդ, Լեռն։
 — Իհարկե, շատ լավ եմ հիշում։
 — Ասում են, նա բարի մարդ եր։
 — Այո՛, սինյոր, շատ բարի յեր, մի-
 այն...
 — Հարբում եր, — լրացրի յես պատաճու
 խոսքը։

— Նա յերբեք ինձ չեր ծեծում, չեր ել
 բարկանում վրաս։ Բայց վո՛չ, մի անգամ
 բարկացավ, հիշում եմ... .

— Յերեի, չարություն եյիր արել։
 — Այո՛։ Այն ժամանակ նրա խանութին
 ահա այն անկյունի կապույտ տան ներքին
 հարկումն եր։ Ամեն որ դնում եյի այնտեղ
 կեղծամներ սանրում։ Մի որ նա տխուր եր
 շատ։ Մի ժեներալ յեկավ յերեսը սափրել
 տալու։ Նրա մոտ միշտ մշտամեծներ եյին
 դալիս։ Յես վերցրի մի սանր, վրեն քաշեցի
 մի թուղթ ու սկսեցի շրթունքներովս նվա-
 դել։ Ժեներալը բարկացավ ու հորս հրամա-
 յց ինձ դուրս անել։ Հայրս մոտեցավ, ա-

կանջս քաշեց ու, վզակոթիս տալով, վոնդեց
 դուրս։ Բայց հետո, յերբ ժեներալը գնաց,
 կանչեց ինձ ներս, աչքերս սրբեց, համբուրեց
 ու ասաց. «Յեթե դու կունենաս յերաժշտա-
 կան ընդունակություն, ինձ դրավ կդնեմ,
 քեզ չեմ թողնիլ առանց ուսման»։ Այո՛,
 սինյոր, շատ լավ մարդ եր, թեև հարբում
 եր։ Սինյոր, ներեցեք, վո՞ր ժամն ե։
 — Տաճնումեկ։

— Ո՞ո, յես ուշացա։ Ներողություն, ելի
 կդամ։ Զեր սենյակը լավն ե։ Դուք ինձ գըր-
 քեր կտաք կարգալու, այո՞։ Շնորհակալ եմ։
 Յտեսություն։ Այսոր կալաֆատիի բենեֆիսն
 ե։ Թատրոնը լիքն ե լինելու։ Պետք ե գնամ,
 պոչ բռնեմ։

Յես կամեցա հարցնել՝ ինչ ասել ե «պոչ
 բռնել», բայց Լեռնն արդեն չքացել եր։
 Կալաֆատին ընտիր յերդչուհի յեր։
 Գնացի թատրոն տոմսակ վերցնելու։ Կաս-
 ոք առջեւ կանգնած նոր գնողների մի յերկայն
 շարք, վոր հասնում եր մինչև փողոցի կեսը։

Յեղանակը սառն եր, խոնավ, անախոքժ:
Պիտի բոնեյի շարքի վերջին տեղն և ամենա-
քիչը մի ժամ սպասեյի մինչև հերթս հաս-
ներ: Ուղում եյի վերադառնալ տուն, յերբ
լսեցի իմ ազգանունը: Դա Լեռնի ձայնն եր,
վոր կարող եյի ճանաչել հարյուրավոր ձայ-
ների մեջ: Նա կանդնած եր կասսից մի քանի
քայլ միայն հեռու, յերկու հրեաների միջև
սեղմված:

— Տոմսակ եք ուղում գնել, — Հարցրեց
նա տաճկերեն:

— Այո՛:

— Յեկեք, տեղս բոնեցեք, ապա թե վոչ,
չուտ չեք հասնիլ կասսին:

Ես բոնեցի նրա տեղը: Նա գնաց կանգ-
նեց շարքի վերջում: Այստեղ միայն իմացա՝
ինչ ասել ե «պոչ բոնել»: Լեռնը կանդնում
եր շարքի հետևում ե, յերբ բավական մոտե-
նում եր կասսին, յուր հերթը ծախում եր
ցանկացողին հինգ-տասը կոպեկով: Հետո
դարձյալ գնում եր ու շարքի հետևում կանգ-

նում: Նա ամեն միջոց դործ եր դնում թատ-
րոնից չհեռանալու համար: Նրա ոդը, կերա-
կուրը, կյանքը, ամեն ինչը թատրոնն եր:

Իմ հետաքրքրությունն այդ պատանու
վերաբերմամբ արդեն այնքան մեծ եր, վոր
աշխատում եյի ամեն որ նրան տեսնել:

Մի առավոտ նրա մոտ հանդիպեցի յեր-
կու անծանոթների, վորոնց հետ յուր սե-
նյակի գոների առջև կանգնած խոսակցում
եր:

Մեկն յուր հասակի պատանի յեր հնամաշ
հաղուստով, բայց գլխին նոր գլխարկ: Դեմ-
քի գծերը բուն հրեական եյին, աչքերը դեղ-
նաղույն, մազերը գրեթե կարմիր, յերեսը
ինչ-վոր բծերով ծածկված, սակայն համակ-
րելի:

Մյուսին յես շատ անդամ եյի տեսել քա-
ղաքի զրոսավայրերում ու թատրոնների առ-
ջև: Դա մոտ քսանուհինդ տարեկան յերիտա-
սարդ եր, այնքան նիհար, այնքան բարակ ու
գունատ, վոր, կարծես, մագաղաթից լիներ

չինված։ Երա յերեսն յերկարավուն եր ու
նեղ, աչքերը կլոր ու փոքրիկ, կոկորդի վոս-
կորը դուրս ցցված։ Հարթ ու նոսր մազերը,
մինչև ունքերը քաշած կակուկ դլխարկի տա-
կից ցած իջնելով, յախույի սկս կպել ելին
բարակ պարանոցին և ընդգրկել կոկորդի մի
մասը։ Մե սյուրտուկի վրա հագած եր թիկ-
նոցավոր վերարկու առանց աստառի, լայն
թևերով։ Մի ձեռին բանած եր բազկի հաս-
տությամբ մի գեղնագույն փշոտ փայտ,
մյուս ձեռին անկազմ դրքույկներ և տեղական
լրագրերի համարները։

— Իմ ընկերներն են, — ասաց Լեռնը,
անմիջապես ծանոթացնելով ինձ նրանց հետ։
— Բանաստեղծ Զառւշենկո, Իցկո Մարդուլիս։
Ենս հաճույքով սեղմեցի յերկուսի ել
ձեռը։

— Զառւշենկոն սիրում է մարդկանց հետ
ծանոթանալ յուր յերկերի միջոցով, — ասաց
լայն վերարկու հագած յերիտասարդը, վոր
ինքը բանաստեղծն եր։

Յեկ անմիջապես, գրքույկներից մեկը
պահելով քթիս առջև, հարցրեց։

— Զեյի՞ք կամենալ, արդյոք, մի որի-
նակ վերցնել։

— Հաճույքով։

Գրքույկի վերնագիրն եր. Часы горя и
страданий; стихотворения Леонида Никола-
евича Чаушенко.

— Դուք գուցե զարմանաք, մոսյո, —
ասաց նա, դնելով վարտիքի գրպանը գրքույ-
կի արժեքը, — վոր յես, այսպես ասած,
հանդէնեցի կապել ձեր վզին իմ յերկը։ Բայց
մի՛ վրդովվեք, մարդիկ իրանց խիղճն են ծա-
խում, Զառւշենկոն յուր յերկերը։ Նախկին
դրաշար եմ։ Ինքս դրում եմ, ինքս շարում,
ինքս տպում, ինքս վաճառում, ինքս ել ու-
տում իմ սրտի արյան վաստակը…

— Իսկ յես նախկին և ներկա ջհուղիկ
եմ, — ընդհատեց բանաստեղծի խոսքը Իցկո
Մարդուլիս կոչված պատանին, — յերբեմն
լրագիրներ եմ ծախում, յերբեմն ել թատրոն-

ներում ծառայում: Նեղ տեղն ընկնելիս փողոցներում կոշիկներ եմ սրբում:

— Յեվ յերևակայում ե իրան ապագա
Բուրբինշտեյն, — հեղնեց Զառւշենկոն:

— Ա՛խ, պարոն, արդյոք դուք յերաժշշ-
տության ուսուցի՞չ եք: Վո՞չ: Ավասո՞ս: Յես
կկամենայի ձեզանից դաշնամուրի վրա դասեր
վերցնել: Ծիծաղիք, Զառւշենկո, բայց ելի
յե՛ս պիտի քո Կասի горя и страданий
յերաժշտության վերածեմ: Դե լա՛վ, գավա-
զանդ մի՛ ցույց տուր, յես յերկչոս ջնուդ-
ներից չեմ, յես հրեա յեմ: Արեվիդե՛րչի,
սինյոր... Գնա՛նք, բանաստեղծ: Զիմբա,
չիմբա—չիլալա՛...

Նա քամու արագությամբ թռավ դուրս:
Զառւշենկոն հետեւց նրան, հաստ գալազանի
ծայրն աղմուկով զարկելով փայտյա սանդու-
ղի աստիճաններին:

Փառք աստուծո, այս անգամ Լեռնի
մայրը տանը չեր գնացել եր չուկա պարեն
գնելու: Լեռնն ասաց, թե Զառւշենկոն ու

իցկո Մարգուլիսն յեկել Եյին խորհրդակցելու
իտալական խմբի առաջին յերդչուհի Բարբե-
նիի բենեֆիսի մասին: Պատրաստվում են
արտաք կարգի ցույցեր: Զառւշենկոն մտա-
դիր ե բենեֆիսի պատվին նվիրել յերդչուհուն
մի բանաստեղծություն, վոր պետք ե թարգ-
մանել իտալերեն:

Յեռ, Լեռնին փորձելու համար, ասացի.

— Կցանկանայի խմանալ, դուք ի՞նչ գործ
ունիք յերդչուհիների բենեֆիսների հետ:

— Ի՞նչպես թե ինչ գործ ունինք, — գո-
չեց նա զարմացած, — յերդչուհիները գեղար-
վեստին չե՞ն ծառայում:

— Շատ ել ծառայում են, հետո՞:

— Ամեն մարդ պարտավոր ե պատվել
գեղարվեստը:

— Գեղարվեստը չույլություն ե: Նա
Հարուստների համար Ե: Խոկ դու և քո ըն-
կերները աղքատ եք...

— Հարուստներն արտիստներին նվերներ
են անում, իսկ մենք՝ ցույցեր...

Հազիվ մի քանի բոպե խոսել եյինք,
յերբ ներս մտավ Լեռնի մայրը: Դնելով պա-
րենի կամբյուղը Շեքսպիրի քթի առջն, նա
իսկույն ևեթ հարձակվեց վորդու վրա.

— Ելի փողոցային սրիկաները այստեղ
ելին, հա՞: Յերեի, խորհուրդ ունեյիք: Մի
շաբաթ ե՝ ոլուխս ցալեցնում եք այդ յերդ-
չուհու բենեֆիսով: Պարոն, տեսա՞ք, տե-
սա՞ք այս անդրամի ընկերներն ովքեր են:
Ի՞նչ կարող ե սովորել այդպիսիներից:
Փո՞ւչ, փո՞ւչ զավակ...

Յերբեմն մայրերը կարող են իրենց հա-
րազատ զավակների թշնամին լինել: Անշուշտ
Լեռնի մայրը սիրում եր վորդուն, բայց չեր
տեսնում յուր և նրա մեջ յեղած վիճը, այն
ահագին վիճը, վոր չեր կարելի լեցնել ու
հարթել անվերջ նախատինքներով: Մի ան-
դամ այս մասին խոսում էյինք մեր սեղանա-
տանը. սինյորա Ստեֆանիան և Բորելին
պաշտպանեցին մորը, իսկ մյուսները՝ վոր-
դուն: Ռախան ասաց.

— Մեզ հրեաներիս համարում են նյու-
թապաշտ: Յես դեմ չեմ, ճիշտ ե. բայց, հա-
վատացեք, վոչ մի հրեա, մանավանդ հրե-
ուհի յուր վորդու վերաբերմամբ այդ քրիս-
տոնյա կնոջ չափ նյութամոլ չեր լինի: Հրե-
ան խելոք կերպով ե հարստահարում յուր
վորդուն: Յեթե յուր վորդու մեջ տեսնում ե
յերաժշտական կամ յերգելու ձիրք, աշխա-
տում ե հենց այդ ձիրքը չահագործել: Նա
չի ստիպում նրան արհեստավոր կամ վաճա-
ռական դառնալ:

Յերկու անգամ Լեռնն իմ ներկայո-
թյամբ լաց յեղափ, յերբ մայրը հանդիմա-
նում եր նրան իբրև «անպետք» զավակի: Նա
փաթաթվեց մոր պարանոցին, դոչելով.

— Մա՛մա, մա՛մա, մի՛ բարկանար, յես
քեզ սիրում եմ:

Ո՞ո, վո՞չ, այդ պատանին չեր կեղծում:
Նա սիրում եր մորն անչափ, և այս նրա դըժ-
բախտության պատճառներից մեկն եր:

— Կարելի՞ յե, — լսեցի մի առավոտ

դռների հետևից լւոնի ձայնը, յերբ գեռ ան-
կողնից չեյի վերկացել:

Ուրախությամբ հրավիրեցի նրան ներս:
Նա գլխաբաց եր, յերեսն անլվա, աչքերի
սպիտակուցները դեղնած, մազերը գգգղված,
դեմքը մաղաղաթի պես գունատ: Կռնատա-
կին պահած եր մանդոլինան և այնպես ա-
մուր սեղմած, վոր, կարծես, վախենում եր
ձեռքից խլեն: Նրա բաճկոնի կոճակները բաց
եյին, փողկապ չուներ, շապկի յեղրերը բա-
ժանվել եյին և յերեսն եյին հանում նրա նի-
շար կուրծքը: Ծնկների վրա կուչկուչված
վարտիքի ծայրերը բարձրացել եյին, յերե-
վում եյին կոչիկների ականջները:

— Ներողություն, սինյոր, — ասաց նա,
ցրված հայացքը պտտեցնելով չորս կողմը, —
կարծում եյի՝ վեր եք կացել:

Յես շտապեցի նրան հանդստացնել, թե
հենց վեր եյի կենում, յերբ յեկավ: Նա
ինդրեց թույլ տալ իրան կես ժամ մնալու
իմ սենյակում; Վոչ միայն կես ժամ, այլ

ժիշտ, յերբ կամենար և վորքան կամենար,
կարող եր ոգտվել իմ սենյակից: Բայց այս
անդամ ինձ շփոթեցրեց նրա այլայլված կեր-
պարանքը:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրի, կարծե-
լով վոր թագնվում ե ինչ-վոր հալածողնե-
րից:

Մի քանի վայրկյան չպատասխանեց: Յես
հարցս չկրկնեցի, սկսեցի հաղնվել: Նա մո-
տեցավ գոներին, նայեց գեպի գուրս ու հետ
յեկավ, կանդնեց սենյակի մեջտեղում, ավե-
լի ամուր սեղմելով մանդոլինան կուան տակ:

— Գիտե՞ք, սինյոր, — ասաց, — կարող
ե մայրս գալ:

— Ի՞նչ անենք, թո՛ղ գա:

— Յես նրանից եմ վիախել: Ուզում եր
մանդոլինաս կոտրտել, վառարան գցել:

— Ինչո՞ւ:

— Մինչեւ լույս չեմ թողել նրան քնելու,
նվագել եմ:

Հետո պատմեց, թե յերեկ ոպերային յե-

բաժշտական խմբի բենեֆիսն ե յեղել: Ներկայացումից հետո բոլոր յերաժիշտները դնացել են Հյուրանոց ընթրելու: Ամբավկետը Լեռնին ել Հրավիրել եր: Ընթրիքի միջոցին մեկը վիսլոնչելով նվագել ե, ի միջին այլոց, և մի սպանական յեղանակ՝ «Մաղրիդի շրջառվելով»:

— Գլխից չեր գուրս գալիս այդ յեղանակը: Ռւզում եյի անպատճառ սովորել հենց այս գիշեր, վոր չմոռանամ:

— Յեկ սովորեցի՞ր:

— Այո՛:

— Ինձ համար կնվագե՞ս:

Լեռնի քնավորությունը պարզ եր: Նա կոտրատվել չգիտեր, ամեն բանի վերաբերվում եր հասարակ: Յես արդեն մի քանի անգամ լսել եյի նրա նվագումը: Վատ եր նվագում թե լսվ, չգիտեմ, միայն զբացվում եր և դգայնել տալիս լսողին:

Նա նստեց աթոռի վրա, գրկեց մանդուինան: Առավոտիան արեգակի կիտրոնագոյն

շողերը սփովել եյին ներս: Լեռնի աչքերն անդիտակցար դարձան գեպի այդ շողերը, կարծես ինչ-վոր գաղտնի մագնիսի զորությամբ: Այս այդ վեր ուղղված աչքերը, այդ հեղ դեմքը: Անցել են յերեք տարիներ, բայց կանցնեն շատ տարիներ, դարձյալ այդ որը վառ կմնա հիշողությանս մեջ:

Ի՞նչ եր Լեռնի նվագածը՝ բացատրել չեմ կարող: Հիշում եմ միայն ինձ վրա գործած տպավորությունը: Կիսամերկ բեշեռվել եյի սենյակիս մեջտեղում և լսում եյի բուռն զգացմունքների վիճումը: Վիշտ և բերկրություն, փոթորկի ու մեղմ թախիծ խառնվել եյին «Մաղրիդի շրջմոլիկի» մեջ. գոնե այսպիս եր թվում ինձ: Գուցե դա մի կրակոտ, տապիտական ժողովրդի սրտի հրաբուխն եր, փոքր ինչ կանոնավորված ինձ անհայտ մի հանճարի ստեղծագործ ուժով, բայց հետաքրքրականն ինձ համար նվագողն եր: Կարծես, նյութեղեն պատանին չքացել եր, մնացել եր միայն նրա սավերը: Նա չեր նկատում իմ

ներկայությունը, քաղցը հնչյունների հեղեղով կլանված նյարդերը չեյին զգում աշխարհի նյութականը: Կարծես, հոգին ամբողջովին ձուլվել եր նվազած յեղանակի հետու ոլացել հեռու մի աշխարհ՝ ընտիր հոգիների կախարդական աշխարհ:

Յերբ ավարտեց, մի քանի վայրկան լուռ եր, անշարժ, աչքերը տակավին հառած արեգակի շողերին; Վորոնք հետզետե գունատվում եյին:

Յես չկարողացա ինձ զսպել, վոգեորված դոչեցի.

— Կեցցե՛ս, Լևոն, կեցցե՛ս...

Բայց նա չլսեց: Անշարժ եր. նուրբ շրթունքները, վորոնք միշտ սեղմված եյին, դողում եյին նկատելի: Հանկարծ նրա ձեռները թուլացան, դլուխը մի վոքք թեքվեց ուսին, մանրուինան հանդարտիկ սահեց կրծքից և ընկապ նիհարիկ ծնկերի վրա: Յեվ նրա գեպի շողերը հառված աչքերի մեջ նշմարեցի արցունք:

— Մանուկ, ինչո՞ւ յես լավիս, — գոչեցի կարեկցությամբ:

Նա վոտքի կանգնեց և, ճակատից հեռացնելով թանձր մազերը, տարորինակ ձայնով արտասանեց.

— Վիոլոնչելիստն ինձ ասաց՝ Մադրիդի շրջմոլիկը դժբախտ և յեղել: Յուրտ գիշերները յերգել ե գրանդի աղջկա լուսամուտի տակ և լաց յեղել... Նրա հայրը ալքատությունից մի որ կախվել ե ծառի վրա, խեղդվել:

Այդ ժամանակ յես չհասկացա նրա խոսքերի խորքերում թագնված բուն վիշտը և կարծեցի զառանցում եր: Արդարեւ, զառանցում եր նա, բայց ինչո՞ւ և ի՞նչ...

— Ա՛յ, ներողություն, — գոչեց նա, հանկարծ ուշքի գալով — յես... անքնությունից...

— Այո՛, Լևոն, անքուն ես: Յեթե կամենում ես՝ հանգստացիր սենյակում:

— Շնորհակալ եմ, սինյոր: Թո՛ւյլ տվեք

միայն մանդոլինաս թողնեմ այստեղ։ Մայրս
կարող ե նրան վառարանը գցել։ Յերեկ լու-
սամուտով փողոց շպրտեց կիմառս ու մի-
քանի լուսանկարներ։

— Լեռն, մայրդ չար կին ե, — գոչեցի
յես, մինչև հոգուս խորքը վրդովմած այրու
վայրենի արարմունքից։

Լեռնը չափազանց վշտացավ և սկսեց
պաշտպանել մորը։ Վո՛չ, վո՛չ, չար կին չէ
նրա մայրը, ընդհակառակը շատ բարի յե։
Նա սիրում ե Լեռնին։ Յերբեմն քնած ժամա-
նակ Լեռնը զգում ե, վոր իրան թագուն համ-
բուրում ե։ Նա սիրում ե, բայց սերը ցույց
չի տալիս, վախենում ե, վոր Լեռնն յերես
առնի, ավելի փչանա։

— Ավելի փչանա՞ս, — գոչեցի յես, —
բայց մի՞թե դու փչացած ես։

— Ի՞նչ գիտեմ, սինյոր։ մայրս ասում
ե՝ «ո՛վ յուր ծնողների կամքը չի կատարում,
փուչ վորդի յե»։

— Ե՛ւ, ուրեմն, ինչո՞ւ չես կատարում

մոլու կամքը, — հարցրի դիտմամբ, կամենա-
լով փորձել նրան։

Նա մի տիսուր հայացք գցեց յերեսիս,
վոչինչ չասաց։ Յես այդ հայացքի մեջ կար-
դացի նրա անդորությունը՝ դառնալ մոր
կամքի շրու զավակ։ Անվիճելի յեր, վոր նա
շուտով կհրաժարվեր կյանքի բոլոր բարիք-
ներից, քան թատրոնից։

Ճաշի միջոցին պատմեցի նրա տարրու-
նակ տրամադրության մասին։ Լուիզան լսեց
լարված ուշադրությամբ։ Նրան նկատելու
չափ շփոթեցրեց այն, ինչ վոր Լեռնն ասել
եր «Մադրիդի շրջմոլիկի» մասին։ Կավալլա-
րոն խորհրդավոր ժպտում եր և գլխով հան-
դիմանական շարժումներ անում, Լուիզայի
աչքերին նայելով։ Ուսանողը նկատեց, թե
Լեռնն աննորմալ ելակ ե, մի տեսակ հոգե-
կան հիվանդ։ Նրա հասակի ու զգացումների
մեջ չկա համերաշխություն։ Իսկ ուղեղը
զարդանում ե անկանոն։ Այս նկատողությու-
նը չափազանց վրդովկեցրեց կավալլարոյին։

Զինայելով ուուս լեզվի քերականական կանոնները, նա սկսեց հակածառել.

— Հոգեկան հիվանդ, հոգեկան հիվանդ. վերջին ժամանակ, կարծես, դիտությունները հենց նրա համար են սովորում, վոր բոլոր տաղանդավոր մարդկանց հիվանդ համարնն: Վո՞չ, պարոններ, իսկական հոգեկան առողջները հենց լեռներն են: Միայն նրանք դըրախտ են, սինյոր ստուդենտ, հասկանում եք, դժբախտ, վոր չեն ծնված կյանքի բարեհաջողող պայմաններում: Փոխանակ դիտնականորեն բացատրելու այլ պատանիների հոգին, ոգնեցեք նրանց. ահա! ինչ: Մի՛ թողնեք աղամանդը փողոցի ցեխի մեջ: Ափսո՞ս և լեռնը:

— Նա որից որ հալվում ե մոմի պես, շարունակեց Կավալլարոն կարեկցաբար, նրա կազմը նուրբ է, չե կարող դիմանալ այլ տեսակ ապրուստի: Յերբեմն գիշերը, հազիվ անկողին պառկած, վեր և կենում, գնում կանգնում է կաստի առջև, առանց վե-

րարկուի, մի քանի կոպեկ վաստակելու համար: Վաստակածի մի մասն ել թատրոնի վրա յե ծախսում: Ահա վաղը սինյորա Բարսինիի բենեֆիսն ե: Դա նրա ամենասկրելի յերգչուհին ե: Համոզված եմ, վոր այժմ իրան տանջում ե, վորպեսզի կարողանա վորեկի կերպ վաղվա ցույցերը գեղեցկացնել...

Հետեւալ յերեկո յես թատրոնումն եյի: Նստած մի բարեկամ ընտանիքի հետ ոթյակներից մեկում, նայում եյի դեպի վերնահարկ: Բազմաթիվ գլուխների մեջ, վերջապես, տեսա լեռնին: Արմունկները պատնեշին հենած, գլուխն ափերի մեջ բռնած, աչքերը հառել եր բեմին: Նրա մի կողմում կանգնած եր բանաստեղծ Զառչենկոն, մյուս կողմում իցկո Մարգուխոը: Յերբ բեմի վրա յերեաց յերգչուհի Բարբինին, լեռնը գլուխը բարձրացրեց և ամենից առաջ ծափահարեց: Նրան հետեւեցին Զառչենկոն և իցկոն, հետո վերնահարկի մի մասը: Նույն վայրկյանին մի քանի տասնյակ ձեռներ ձգեցին բեմի վրա

ինչ-վոր սպիտակ ու կարմիր ծաղկներ, նաև գույնդդույն բարակ թղթի թերթիկներ։ Գոյցավ մի ֆանթաստիկ անձրեւ։ Պարտերն ակամա հափշտակվեց, և ամբողջ հինգ բոպե թատրոնը թնդում եր բուռն ծափահարություններից։ Վերցնելով յուր դլիսին տեղացող անձրեւից մի կաթիլ՝ մի ծաղիկ, յերդ-չուհին սեղմեց սրտին, անդադար դլուխ տալով աջ ու ձախ, հետո աչքերը բարձրացրեց դեպի վերնահարկ և ողային համբույրներ ուղղեց պատանի յերկրապատուներին։ Այս ավելի վողեռքեց նրանց և ավելի զորացրեց աղաղակներն ու ծափերը։

Լեռնն յուր մարմնի կիսով դուրս եր յեկել պատմեշի հետևից։ Կալծես, ձգտում եր ծաղկիների հետ ընկնել յերգչուհու վոտների տակ իբրև կենդանի զոհ գեղարվեստի։

Անցավ առաջին գործողությունը, յերկրորդը, յերրորդը։ Լեռնի վողեռքությունը սաստկանում եր յերգչուհու աջողության հետ դուղընթաց։ Նա մերթ ծափահարում եր,

ճեռները գլխից վեր բարձրացրած, մերթ աղաղակում։ «Եվի՛վա, բրավա՛, բրավի՛սիմա» . . .

Վերջին գործողության կիսում լեռնը հանկարծ չքացավ Զառւշենկոյի և Իշկոյի հետ, մինչև ներկայացման վերջը չերեաց այլն։

Դուրս գալով խուռն բազմության հետ փողոց, տեսա հետեւյալը։ Թվով յերեսուն-քառասուն վոստիկաններ կազմել եյին մի ընդարձակ շրջան՝ հեղեղված ելեքտրական ահագին լապտերների առատ լուսով։ Թատրոնից դուրս յեկողները հավաքվում եյին շրջանի հետեւում։ Մուտքի մոտ մի կողմում խորված եյին հարյուրի չափ համալսարանական ուսանողներ, մյուս կողմում կանգնած եյին յերկու կանոնավոր շարքերի բաժանված մի խումբ պատանիներ տասնուհինդից մինչև քսան տարեկան։ Միակ չափահասը նրանց մէջ Զառւշենկոն եր։ Նա ձեռին պահած եր մի թերթ թուղթ։

Ուսանողներից մի տասը հոգի ձեռներում
բռնած եյին մի-մի փոքրիկ փունջ ծաղիկ-
ների, իսկ պատանիները՝ մի-մի վառ կերոն:

Տեսարանը գեղեցիկ եր, հետաքրքրական:
Գիտեյի, վոր լևոնը հետին դեր չի կատա-
րում նրա մեջ: Քաշվեցի մի կողմ և աչքե-
րով վորոնեցի նրան: Դժվար չեր գտնելը: Նա
կանգնած եր պատանիների շարքերից մեկի
գլխին, ձեռքին մի յերկայն ձող, վորի ծայ-
րում վառվում եր հաստ մոմի կտորը: Ցուրտ
չեր զգում նա առանց վերաբեռնի, նույնիսկ
առանց կրնակոշիկների, յուր բարակ պիչա-
կում: Յերեկի, չեր զգում, թե յեղանակը
բավական ցուրտ եր: Նա հափշտակած եր
յուր դերով, աշխատում եր կարդ պահպա-
նել պատանիների շարքում: Կերոնների հրե-
ղեն լեզվակիները ելեկտրական ահագին լալ-
տերների լուսո ներկայացնում եյին
դեղնագույն աղոտ բծեր՝ տկար վորակես
աստղերը լուսնիա յերեկո:

Լևոնի նիհար դեմքը ստացել եր մի տե-

սակ բաց-մանիշակագույն յերանդ: Նա հե-
շեցնում եր դեկադենտ նկարչի քմահաճ վըր-
ձինի տարորինակ ստեղծագործություն: Սա-
կայն այդ հիվանդուս դեմքի վրա աչքերը
փայլում եյին հղկած պողպատի պես: Զորս
կողմից ելեկտրականությամբ հեղեղված՝
նրա մարմինը գետնի վրա չեր ձգում ստվեր.
Նա ինքը, կարծես, ստվեր լիներ: Նրա շար-
ժումները արագ եյին, զղաճդական, լի ա-
վյունով: Յերբ խոսում եր, նույնիսկ հեռվից
ինձ թվում եր, վոր խոսում են նրա բոլոր
նյարդերը, սրտի բոլոր թելերը: Ահագին
բազմության մեջ ձայնն ինձ չեր հասնում,
բայց զրազ կգայի, վոր այդ ձայնը դողում
եր հոգեկան բարձր հաճույքից յուր բոլոր
յեկեցներով: Լևոնն յերջանիկ եր:

Յերբ յերգչուհին դուրս յեկավ թատրո-
նից յերկրպագուներով շրջապատված, իցկո
Մարդուլիսն ամենից առաջ աղաղակեց.
«ուռուա»: Զառւշենկոն, գավազանով հետ
մղելով նրան, մոտեցավ յերգչուհուն ու տը-

վեց նրան յուր ձեռքի թուղթը: Անշուշտ,
այդ նրա վլոտանավորն եր, հատկապես որվա
առիթով գրված:

Լեռնը գրակը վերցրեց և տէը գցեց:
Նրա թանձը մազերից յերկու չերտ ընկան
նուրբ ճակատի վրա: Նրա որինակին հետե-
վեց պատանիների ամբողջ խումբը: Յերեան
յեկավ Զառւշենկոյի նեղ, յերկայնածե գլու-
խը, Հարթ, նոսր մազերով: Յեկ կիսամերկ,
կիսաքաղցած պատանիների տհաս ձայները՝
«բրա՛վա, բրավի՛սսիմա», խառնվելով մի-
մյանց, կարծես, սառեցին ձմեռային ողում:
Այդ վայրկյանին յես անիծեցի մտքում
յերջանիկ յերդչուհուն, վոր, թնկուզ ակա-
մա, խելքից հանել եր այդ մատաղահաս
եյակներին և վտանգի յեր յենթարկում նը-
րանց կյանքը, ո՛վ գիտե, գուցե և՛ հոգին:
Մի՞թե, արդարե, զեղարվեստն այնքան տ-
նողոք և յուր բարձրության վրա, վոր յուր
առջեւ ծունկ և չոքեցնել տալիս նույնիսկ
անմեղությանը:

Յերբ յերդչուհին մոտեցավ թատրոնի
առջեւ սպասող փառահեղ կառքին, մի քանի
զույգ ձեռներ սկսեցին արձակել ձիերը:
Կարծեցի, թե Լեռնն ե սկզբնապատճառը և
շտապեցի մտքումս հայհոյել բարեկամիս:
Սակայն դեռ լավ չեյի ճանաչում նրան:
Նայեցի՝ չկար վո՛չ լծկողների և վո՛չ լծող-
ների մեջ: Դրանք բացառապես ուսանողներ
եյին, վորոնց թեթևամառթյունը, յերեկ,
անասնության եր հասնում:

Լեռնի խումբն աջ ու ահյակ ուղեկցում
եր կառքին՝ վառ կերպներով: Յերդչուհին
մեկմեկ ընդունում եր ուսանողներից
փնջերը, փետում եր ծաղիկներն ու սըփ-
ուում պատանիների վրա, իսկ ուսանողներին
վարձարաւում եր ողային համբույրներով:

Ճեղքելով ամբոխը, յես մոտեցա բարե-
կամիս:

— Աա՛, գուք ե՞լ այստեղ եք, — գոչեց
նա, հեալով, — լսեցի՞ք՝ ինչպես յերդեց,
լսեցի՞ք . . .

— Այո՛, Լևոն, հիանալի յերգեց: Բայց
այդ ուսանողնե՞րը... Ի՞նչ են անում...
Մի՞թե դու հավանում ես այդպիսի ցույցեր:

— Աստված մի՛ արացե:

— Մենք անասուններ չենք, — ասաց
իցկո Մարգուլիսը:

— Այո՛ մենք մարդեկ ենք, — գոչեց
Զառւշենկոն, վրդովված... Ե՛յ, պարոնայք
ստուդենտներ, մի՛ ձգեք ձեր վարկը. Ե՛յ,
պարոններ. ամոթ ե...

— Մաի՛կ արեք, — գոչեց Լևոնը, —
ինքն ել չի հավանում, ուզում ե իջնել կառ-
քեց... Բայց վո՛չ, չի իջնում... Աա...
Վի՛տյա, Պետրո, Մերգել, Խայս, հանդ-
ցրեք կերոնները, ... Վո՛չ, վո՛չ, վո՛չ,
սպասեցե՛ք... Նա իջնում ե կառքից...
Իջավ, իջավ... Զիերը լծում են... Կարի՞ս-
սիմա, կեցցե՛ Բարբինի. Եվի՞վա, բրա՞-
վա, բրավի՞սսիմա, առա՞ջ, առա՞ջ...

Յեվ, կերոնը բարձրացրած, աղաղակե-

լով, չքացավ ամբոխի՛ մեջ, յուր հրեա և
հույն ընկերների հետ... Նրանց հետեւց
Զառւշենկոն, լայն վերարկութի փեշերը ողի
մեջ ֆրֆոացնելով պատառութած առա-
գաստների պիս...

Յես տուն վերադարձա ծանր տպավո-
րության տակ: Այդ գիշեր յերազումս տեսա
Լևոնի հորը: Թշվա՛ռ վարսավիլ: Նա հար-
բած, կեղտոտ ու պատառութած հագուստում
շնթռկել եր թատրոնի մուտքի առջև: Ան-
ցորդները հեգնում ու ծիծաղում ելին նրա
անհույս սերը, վոր, ո՛վ գիտե, զուցե առա-
ջացել եր գեղարվեստի սիրուց: Այսպես եյի
յես միշտ պատկերացնում վարսավիրին, այս-
պես ել տեսա նրան յերազումս...

Զարթնելով, փափառ զգացի Լևոնին
տեսնելու: Բարձրացա վերե: Տանը չեր: Մայ-
րըն ինձ հանդիպեց արտասուքը աչքերին և
գանգատվեց, թե գիշերը տուն ե վերադարձել
յերեք ժամին: Այսոր գարթնել ե թե չե, իս-
կույն տնից դուրս ե յեկել:

— Պարոն, — աղեքսեց այրին, — դուք
կարող եք նրան խելքի բերել: Նա սիրում է
ձեզ, կըսէ ձեր խոսքը: Նա գնում է հոր ճա-
նապարհով: Վերջն իրան հարթեցողության
կտա և շան պես կթավալի փողոցներում:

— Նա այդ չի անիլ, խելոք ե:

— Ա'խ, պարոն, կարծում եք՝ հայրը
հիմա՞ր եր: Վո՛չ, նա ել խելոք եր: Բայց
խելքից հանեցին, որս սեացըին: Ամուսնուս
ձեռքիցս խելցին, չեմ ուզնում՝ վորդուս ել
խլեն... Պարոն, ողնեցնք, յես մայր եմ,
հասկանո՞ւմ եք, մայր...

Այս', մայր եք այդ կինը, գիտեյի, վոր
սիրում եք վորդուն ու տանջվում նրա
պատճառով: Այժմ խղճում ու մինչեւ անդամ
ցավակցում եյի նրան. բայց դարձյալ ա-
նախորժ եյին ինձ համար նրա անվերջ գան-
դատները, նրա յեսամոլ հոգացողությունը
վորդու համար:

Կեսորից հետո կրկին բարձրացա վերև:
Այս անդամ Լեռնը տանն եր, բայց անկող-

նում պառկած: Նրա վտիտ այտերի վրա
նշմարեցի անսովոր կարմրություն: Բռնեցի
բազուկը, յերակը զարկում եր ուժին:
Անշուշտ յերեկ մրսել եր: Բայց չեր հանձն
առնում հիվանդությունը: Նա ուրախ եր և,
ողավելով մոր բացակայությունից, հայտ-
նեց յուր ուրախության պատճառը: Բարձի
տակից հանեց մի լուսանկար և, ցույց տա-
լով, հարցրեց.

— Ճանաչո՞ւմ եք:

Այդ յերեկվա յերջանիկ յերգչուհու
լուսանկարն եր:

«Իմ սիրելի արտիստին», կարդացի լու-
սանկարի ճակատին:

— Ամենքն ել ինձ արտիստ են կոչում,—
ասաց Լեռնը, — չդիտեմ ինչու: Այսոր գնա-
ցել եյի նրան նորհավորելու յերեկվա աջո-
ղության համար... Ծագիկներ եյի տարել:
Հրավիրեց ներս, կաֆեյով հյուրասիրեց:
Բավական խոսեցինք... հարցնում եր՝ ինչ-
քան եմ վաստակում: Խարեցի, ասացի՝ հայրս

ժառանգություն ե թողել: Վախենում եյի,
վոր փող առաջարկի ինձ: Նա նվիրեց ինձ
յուր լուսանկարը: Յես համբուրեցի նրա ձեռ
ուր, նա ել իմ ճակատը: Ո՛ո, սինյոր, յես
շատ յերգչուհիներից ունիմ այդպիսի նվեր-
ներ, ահա!, այն ալբոմը լիքն ե...

Յեվ այս վարձատրությամբ նա գոհ ու
յերջանիկ եր:

— Բայց յես մի լուսանկար ունիմ, — շա-
րունակեց նա, — ալբոմում չեմ պահում:
Մայրս սպառնում ե բոլորն այրել, վախե-
նում եմ այս մեկն ել այրի... իսկույն ցույց
կտամ...

Նա բարձրացավ տեղից, պէջակի գրպա-
նից հանեց մի ծրար, ծրարի միջից թանգա-
դին լուսանկարը: Յես կարգացի հետևյալ
ժակագիրը. «Իմ ապագա յերկրպագուին—
լուիզա»:

— Ո՛չ, ճիշտ ե, բոլորովին ճիշտ, սի-
նյոր: Յես նրա ապագա յերկրպագուն
կլինիմ: Լուիզան փայլուն ապագա ունի.

Կտեսնեք, սինյոր, կտեսնեք... Բայց այս
ի՞նչ ե, գլուխս պտտեց, պառկեմ...

Յերբ տիկին Ալմաստը — Լևոնի մայրը —
ներս մտավ, խորհուրդ տվեցի բժիշկ
Հրավիրել: Լևոնը գլուխը բարձրացրեց,
նստեց անկողնում: Ի՞նչ բժիշկ, ո՞վ ե հի-
վանդ, հարկավոր չե բժիշկ... Յես հասկա-
ցա նրա միտքը, վախենում եր, վոր բժիշկն
արգելի նրան տնից գուրս գալու:

Յերեկոյան յոթ ժամին յերրորդ անգամ
բարձրացա վերև և նրան չտեսա: Տիկին
Ալմաստն սասց, թե իմ դուրս դաշտոց հետո
թագուն հագնվել ե ու փախել...

Անմի՛տ պատանի. նա վտանգի յեր յեն-
թարկում իր կյանքը: Յես խակույն դուրս
յեկա փողոց. գիտեյի ուր կարող ե լինել:
Հանդիպեցի նրան թատրոնի մուտքի առջև,

— Պարոններ, չե՞ք կամենում պրոգրամ
գնել, — դիմում եր նա անցորդներին, ա-
ռաջարկելով նույն որվա ներկայացման
ծրագիրը:

Մարդիկ անցնում եյին անտարբեր, ան-
գամ չնայելով նրան, իսկ վոմանք կոպտու-
թյամբ գոռում եյին. «Գնա՛, կորի՛ր»: Յէվ
Լեռնի հպարտ հոգին կըում եր այդ վիրավո-
րանքները համբերությամբ: Իմ սիրաը մոր-
մոքվեց, յերբ նայեցի նրա կապտած դեմ-
քին:

— Գնա՛ տուն, գնա՛, — խնդրեցի յես, —
դու բոլորովին հիվանդ ես...

— Ո՞վ ասաց հիվանդ եմ: Մա՞յսու: Նա
միշտ կամ իրան և հիվանդ յերեակայում
կամ ինձ: Այս յերեկոնոր ոսկերա յե ներ-
կայացվում, յես առօն գնամ: Վո՞չ, սի-
նյոր, ահա՛ իմ տունը...

Նա ցույց տվեց թատրոնը և ժպտալով
հեռացավ: Հեռվից լսում եյի նրա ձայնը.

— Պարո՞ն, պրոգրամ, պրոգրամ, չե՞ք
կամենում, նոր ոսկերա յե, հետաքրքրական.
պրոգրամ, հատը տասը կոպեկ...

Մյուս որն առավոտյան դարձյալ բարձ-
րացա վերև և ելի նրան անկողնում տեսա:

Միւնույն տանը ընակվում եր մի հրեա
բժիշկ: Շտապեցի նրան հրավիրել: Քննեց
հիվանդին, գրեց ինչ-վոր դեղ: Յերկու որ
հազիվ կարողացանք Լեռնին տանը պահել,
յերկորդ յերեկո լաց յեղավ, յերբ արգե-
լեցինք թատրոն գնալ: Բարեբախտաբար,
յերբորդ որը տաքությունն անցավ:

Զմեռային սեղոն վերջացավ: Իմ հա-
րևան արտիստները հենց մեծ պասի առաջին
որն ուղևորվեցին իրենց հայրենիքը: Այդ
որը տիսուր որ եր վոչ միայն Լեռնի,
այլև ինձ համար. այնքան արդեն վարժվել
եյի հարեաններիս շըջանին:

Մենք մինչեւ կայարան ուղեկցեցինք ի-
տալացիներին: Հրաժեշտ տալիս՝ Կավալա-
րոն յերեք անդամ բարեկամարար համբուր-
վեց Լեռնի հետ...

Հենց նույն որը լուիզան ինձ ասաց, թե
ինքն ել ամենաուշը մի ամսից ուղևորվելու
յե հոտիկա: Հարցը վճռված եր. սինյորա

Ստեֆանիան վազուց եր հաշտվել աղջկանից
բաժանվելու մտքի հետ:

Յերբ հայտնեցի Լևոնին լուիզայի ու-
ղեռության մոտալուտ ժամանակը, ինձ
այնպես թվայ, վոր լուրը նրա վրա առան-
ձին տպավորություն չգործեց: Գուցե այդ
նրանից եր, վոր նույն որերը նա առհասա-
րակ շատ տիսուր եր տրամադրված: Մեծ
պասի առաջին շաբաթն եր, թատրոնները
փակ եյին: Լևոնն ամեն որ գնում եր քաղա-
քային թատրոնի շուրջը գտնվող գեղեցիկ
պարտեզը, նստում այնտեղ ու նայում հըս-
կայական շինությանը: Հետո գլուխը կըրծ-
քին թեքած, ով գիտե ինչ խորհրդածու-
թյունների մեջ, վերադառնում եր տուն:
Նա նորոգել եր տվել մոր ձեռքով լուսամու-
տից փողոց շպրտված կիթառը, նվազում
եր: Յերբեմն գալիս եր ինձ մոտ և իմ առա-
ջարկությամբ մանդոլինա նվազում: Մի
անգամ թախանձեցի նրան կրկնել «Մադրի-
դի շրջմոլիկը»: մերժեց:

Ուղերային փոխարինեց դրաման: Մեծ
պասի առաջին կիրակուց սկսվեցին ներկայա-
ցումները: Լևոնը մտավ յուր դերի մեջ,
բայց վո՛չ նախկին սիրով. դրաման ոպերայի
չափ չեր սիրում, մանավանդ վոր յեկվոր
խմբի մեջ չկային գրավիչ ուժեր: Սակայն
պատանուն պաշարել եր ուրիշ տեսակ աշ-
խույժ, վոր ինձ անհանգստացնում եր: Նա
ամեն որ գալիս եր ինձ մոտ, վերցնում ման-
գոլինան, նստում լուսամուտի մոտ, նվա-
զում «Մադրիդի շրջմոլիկը»: Յերբեմն հան-
կարծ ընդհատում եր նվագումը, մանդոլինան
շտապով գնում եր սեղանիս վրա ու դուրս
վագում: Նա գնում եր լուիզայի մոտ, նըս-
տում և յերկար ու յերկար հարց ու փորձ
անում առաջիկա ճամբորդության մասին:
Յեկ բարեսիրու լուիզան յերեք չեր ձանձրա-
նում նրա հարցերից, վորովհետեւ նրա համար
հաճելի յեր խոսել յուր պատայի մասին:

— Գիտե՞ք, — դարձավ ինձ մի անգամ
Բախսան, — նա ուղղակի սիրահարված ե լու-

իզայի վրա: Այո՛, կարող եմ յերդել, վոր
սիրահարդած ե:

— Զգո՛ւշ յեղեք, որիորու— ասացի
յես, — Լոռնը կլսի ու կվշտանա:

Յես Հիշեցի թշվառ վարսավերին և
վախեցա՝ մի գուցե վորդին յենթարկվի հոր
վիճակին: Բայց, բարեբախտաբար, Լուիզայի
շրջապատողներն ավելի խելացի եյին, քան
այն յերդչուհու շրջանը, վորի վրա սիրա-
հարված եր յեղել վարսավերը: Ռախտա-
խոսք տվեց ինձ այլևս չխոսել Լոռնի նվիրա-
կան զգացումների մասին...

Հասավ, վերջապես, որիորդի ուղևորու-
թյան որը: Մի շարաթ եր՝ Լոռնն անճանաչելի
յեր դարձել. նա ուրախ եր ու զվարթ: Կար-
ծես, ինքն եր պատրաստվում ճանապարհոր-
դելու: Գնում եր, դալիս, խոսում, զվարճա-
խոսում: Զգիտեր ինչ աներ Լուիզայի սիրու-
շահելու համար: Ուղևորության նախընթաց
յերեկո լուիզան, ցույց տալով մի արծաթե
գրչակոթ, ասաց.

— Տեսէք ի՞նչ խելառարություն ե արել
ձեր հայրենակիցը: Զե՞ վոր այս նրա մի շա-
րաթվա աշխատանքի վարձն ե:

— Նա նվիրել ե ձեզ այդ գրիչը, վոր
նամակներ գրեք իրան, — ասացի յես:

— Այո՛, և յես կգրեմ նրան: Խնդրեցի
նրան հետ վերցնել նվերը, վիրավորվեց, քիչ
մնաց լաց լինի:

Գնացքն ուղևորվում եր առավոտյան
տասը ժամին: Մենք, սինյորա Ստեֆանիայի
բոլոր կենողներս, գնացինք կայարան Լուի-
զային ճանապարհ դնելու: Կարծում եյի, Լե-
վոնն ամենից առաջ յեկած կլինի այնտեղ:
Սակայն նա չկար և չերկաց յերկար ժամա-
նակ: Այս անսպասելի յեր. ի՞նչը կարող եր
խանդարել նրան վերջին անգամ տեսնելու
Լուիզային:

Սինյորա Ստեֆանիան ինձ հաղորդեց,
թե Կավալլարոյից մի շատ սիրավեր նամակ ե
ստացել: Յերդիչն ուրախությամբ հանձն ե

առնում հոգալ իտալիայում Լուիզայի մասին, ղեկավարել նրա առաջին քայլերը:

— Նա շատ ազնիվ մարդ է, — ավելացրեց տանտիրուհիս ուրախ-ուրախ, — Հարազատ յեղբոր պես կնայի Լուիզային: ՅԵս աղջկանս բաց չեյի թողնիլ, յեթե չլիներ կավալարոն...

ՅԵրբեք Լուիզային այնչափ զվարթ ու զվարճախոս չեցի տեսել, վորչափ այդ որը, չնայելով վոր մինչեւ կայարան գնալն յերկու անդամ արտասվել եր մորից բաժանվելու պատճառով: Մի վայրկյան անդամ չեր հանգըստանում, թռչկոտում եր ինչպես յոթ տարեկան աղջիկ, քրքջում եր, հրճվում յուր ճամբորդությամբ: Ամենքիս հետ կատակներ եր անում և բոլորին խոստանում առանձին-առանձին նամակ գրել: Նա լի յեր ապագայի վերաբերմամբ քաղցր հույսերով և այդ հույսերը չեր թագցնում մեղանից: Մի յերկու տարուց հետո նա կվերաբառնա մշակված, կատարելագործված ձայնով, կսկսի յերգել

ոպերայում: Տեսեք, ի՞նչպիսի աջողություն կունենա, վո՞րքան յերկրագունեց:

«Իսկ նա՞» — անցավ մտքովս ակամա, — նրա մասին չե՞ս մտածում»:

— Բայց ո՞ւր ե Լեռնը, — հարցրեց Լուիզան հանկարծ, կարծես, գուշակելով իմ միտքը... ա՞հ, իմացա ինչո՞ւ համար ե ուշանդամ: Ուիշելիեցի փողոցով անցնելիս տեսսա նրան ծաղկավաճառի խանութում: Այդ պատճառու սիրտը ովկիանոս ե, ընդարձակ... Ահա նա, գալիս ե... Տեսեք՝ ինչ ե բերում, չեյի՞ ասում... Անուղղելի՞...

Ճեղքելով կայարանի ամբոխը, Լեռնը մոռեցավ մեղ մի գեղեցիկ փունջ ճեւին: Շատ վազելուց քրտնել եր ու սաստիկ հեռու եր: Դիմելով ուղարկի Լուիզային, գղակը վերցրեց և, գլուխ տալով, փունջը ներկայացրեց:

Արդեն լավ ճանաչելով նրան, յես վախեցա միայն մի բանից՝ Լուիզայի հանդիմանությունից: ՅԵթե որիորդն ամենաթեթև ակ-

Այն հոգեկան հաճույքը, վոր մի ժպիտով կուիզան պատճառել եր կեռնին, վայրկենաբար չքացավ, տեղի տալով գալոնի նախանձի կրծող կրքին: Բայց կեռնը գիտեր դստել իրան չափահաս տղամարդի պես: Նա ասաց:

— Այդ լավ է: Սինյոր Կավալլարոն կողմանին սինյորինա կուիզային:

Յերկրորդ զանգակի միջոցին կուիզան սկսեց վերջին հրաժեշտը տալ: Նա արսով ավելի, քան կարելի յեր սպասել նույնիսկ յուր նման մի բարի, հասարակ և պարզասիրտ ուրիորդից, վոր վարակված չեր նախապահարումներով: Ազատվելով մոր դրկից, ամենից առաջ կու կատարեց կարմըցին ներքին հաճույքից:

Նարկ անդամ աներ, թե այդպիսի մի նվիր բոլորովին չի համապատասխանում կեռնի աղքատ գրպանին, գիտեյի, պիտի չարաչար վիրավորեր նրան: Բայց նա նրբազդաց գըտ նվիր: իսկույն ըմբռնեց կեռնի հոգեբանությունն և այնպես հայտնեց յուր չնորհակ ուլությունը, այնպես ժպիկ չնվերը, վոր պատանու այտերը կարմըցին ներքին հաճույքից:

Այդչափ սրտագետ չգտնվեց Ռախան նա հարցրեց կուիզային:

— Կավալլարոն քեզ դիմավորելո՞ւ յե Միլանում:

— Այո՛, — պատասխանեց սինյորա Ստեֆանիան:

— Մի՞թե նա այնոեղ ե, — հարցրեց կեռնը հուզված, դողդոջուն ձայնով:

— Նա յեկել ե Միլան հատկապես կուիզային դիմավորելու համար, — պատասխանեց սինյորա Ստեֆանիան մի առանձին հաճույքով:

Յես դիտում եյի կեռնին: Նա բեկեռվել եր նույն տեղում, ուր արժանացավ կուիզայի հրաժեշտի համբույրին, և նայում եց այն

լուսամուտին, ուր պիտի յերևար որիորքը:
Բնազդաբար բռնեցի նրա թերց և մի փոքը
հեռացրի կառախմբից...

Ահա յերեաց լուիզայի զվարթ դեմքը
լուսամուտից: Նա ողային համբույրներ եր
ուղարկում մեզ: Մի քանի բոպե ևս, և լավեց
յերրորդ զանգը, ու կառախմումքը կամացուկ
շարժվեց, այնպես անաղմուկ, վոր կարծես
նավ եր լողում: Այն ժամանակ միայն Լեվո-
նը սթափվեց և գլխարկը բարձրացնելով գո-
չեց իտալերեն.

— Բարի ճանապարհ... Յահսու-
թյուն... Շուտով...

Տուն վերաբարձանք յերկուսս միասին
ձիաքարչով: Ճանապարհին Լեռնը մի բառ
անգամ չարտասանեց: Լուռ եյի և յես չեյի
կամենում ընդհատել նրա մտքերի թերը: Թե
նա տանջվում եր՝ այս պարզ եր ինձ համար,
թե նա յերջանիկ եր լուիզայի համբույրով՝
այս ել յերեսում եր: Բայց թե ի՞նչ եր մտա-
ծում՝ այս չիմացա. յերեսում եր միայն, վոր

նրան զբաղեցնողը սովորական մի միտք չե...

Յես հրավիրեցի նրան սենյակս: Ինչ-վոր
ուստածառով հրաժարվեց դալ: Արագ-արագ
բարձրանալով վերև, չքացավ հինդերորդ
հարկի բարձրության մեջ:

Այդ որից ավելի քան մի չարաթ անցավ,
յես նրան չտեսա: Ինքը չեր գալիս սենյակս,
իսկ յես բարձրանում եյի վերև և միայն մո-
րը հանդիպում:

— Ուշ գիշերին տուն ե գալիս սենյակս,
յերբ յես քնած եմ, առավոտը գնում ե, յերբ
քնած եմ: Բայց լավ վորդի յե, ամեն որ սե-
ղանի վրա թողնում ե հիսուն կոպեկ վողոր-
մություն... անիծվի՞ նա...

— Տիկին, — զոչեցի յես բարկացած,
բոլորովին համբերությունից դուրս գալով
այրու անլերջ անեծքներից, —նա ձեր ծախքը
տալիս ե, հերիք ե, ել ի՞նչ եք ուզում...

Իեղձ կինն ապշած նայեց յերեախս ու մի
քայլ հետ դրեց: Յերեի, շատ եյի բարկացած,
և նա չեր սպասում իմ կողմից այդչափ կոպ-

տություն։ Յես զղջացի։ ինչ և լիներ, նա դժբախտ եր, գոնե այդպես եր համարում իրան։

— Հետաքրքրվե՞լ եք, արդյոք, ուր ե գնում ամեն որ, — հարցը յես, ձայնս մեղմացնելով։

— Շատ ել հետաքրքրվում եմ, վոր չի ասո՞ւմ։ Կիթառն ել ամեն որ հետը տանում ե։ Բայց յես կիմանամ՝ ուր ե գնում, կիմանամ։ չեմ թողնիլ, վոր կորչի հոր պես . . .

Զարմանալին այն եր, վոր թատրոնների շուրջն ել չեյի հանդիպում կեռնին։ Յես կատարելապես տիրում եյի առանց նրան, մանավանդ վոր սինյորա Ստեֆանիայի սեղանատունը զրկվել եր յուր հրապույրից։ Այնտեղ այլևս չեյին հնչում կուիզայի մետաղային ձայնն ու վարակիչ ծիծաղը։ Սինյորա Ստեֆանիան նրա ուղևորվելու հենց յերկրորդ որը դաշնամուրը վերադարձրել եր յերաժտական խանութ, ուսկից վերցրած եր ամսավարձով։ Զկար վո՞չ նվազող, վո՞չ յեր-

գող, վո՞չ ծիծաղող։ Թախան և ուսանողը մտերմացել եյին ու զբաղված եյին իրանց մը-տերմությամբ։ Ավարտելով ճաշը, նրանք չմապում եյին հեռանալ իրանց սենյակները։

Յես ուրախությամբ կտեղափուկվեյի մի ուրիշ բնակարան, յեթե չվնասեյի Ստեֆանիայի գրությանը։ Նրա սենյակների մեծ մասը դատարկ եր, յեթե յես ել դուրս գայի, խեղճ կինը պիտի տուժեր։

Մի անգամ ճաշից հետո բուլվարումն եյի։ Այստեղից բացվում եր Ողեսսայի գեղեցիկ տեսարաններից մինը։ Մոտ յերկու հարյուր վոտնաչափ բարձրությունից յերեսում են ամբողջ նավահանգիստն ու ծովածոցը իրանց հազարավոր նավերով։ Յես վաղուց եյի կըշտացել այդ տեսարանից։ Նստած ամբոխից հեռու մի առանձնակի նստարանի վրա՝ յերաժշտություն եյի լսում։ Ակամա հիշում եյի կեռնի մանդուկնան, վոր տասն որ եր վորքացել եր սեղանիս վրա։ «Ո՞ւր ե նա այժմ», —

Հարցնում եյի ինքս ինձ, և հարցը մնում եր հարց:

— Բոնծուր, մոսյո, — լսեցի մի թույլ թռքախտավոր ձայն:

Գլուխս բարձրացրի և իմ առջև տեսա Զառւշենկոյին իցկո Մարդուլիսի հետ: Այս հանդիպումն ինձ ուրախացրեց: Յես սեղմեցի նրանց ձեռը և իսկույն հարցրի կեռնի մասին:

Զառւշենկոն հաստ գալազանը բարձրացրեց լայն վերարկուի տակից և, ցույց տալով նավահանգիստը, թատրոնական յեղանակով ասաց.

— Այստեղ ե:

— Զառւշենկո, ինչո՞ւ այսոր ձևերդ տրագիֆական են, — ասաց իցկոն:

— Վորովհետեւ, սիրելի ջհուղիկս, այնտեղ ե կատարվում կյանքի տրագեդիան: Մարդիկ տանջվում են ու մեռնում խավարի մեջ: Գնա՞նք, տա՞ր ինձ այստեղ, իցկո: Զառւշենկոն արխտոկրատ բանաստեղծներից չե,

վորոնք խորչում են ամբոխից: Մաքսիմ Գորիկի գրածները չես կարդացել, Զառւշենկոյինը կկարգաս: Ութ տարի ուսումնասիրել եմ արձիճային աշխարհը. այժմ ուզում եմ ուսումնասիրել նավահանգստի ամբոխը: Խնանք, պարոն, — դարձավ նա ինձ, — դուք ել գրող եք, գնանք, մի՛ ամաչեք:

— Գնանք, ուր վոր ուզում եք, միայն թե կեռնին ցույց տվեք:

— Իցկոն մեզ կառաջնորդի: Նա խավարի ծնունդ ե: Հայրը նավահանգստում հին լաթեր ու յերկաթ ե ժողովում, պիտի իմանա հավար աշխարհի բոլոր խորչերը յուր ձեռքի ափի պես:

— Իսկ դու պիտի լուսավորես այդ խավար աշխարհը ահա դրանցով, — ասաց իցկոն, զարկելով բանաստեղծի ձեռքի գրքույկերին: — Քանի՞ որինակ ես վերցրել: Տա՞սը: Կիարջենք, միամիտ կաց: Նո՞ւ, չիմբա-չիմբա, չիլալա... Զառւշենկո, չիլալա՛:

Նա ձախ վոտը բարձրացրեց և, աջ վոտի
վրա վոստոստելով, վազեց առաջ:

Ռդեսսայի նավահանդիսար քաղաքի հետ
միացրած ե մի հսկայական քարե սանդուղով,
վորի բարձրության վրա բուլվարի մեջտե-
ղում կանգնած ե քաղաքի հիմնադիր Ռիշե-
լիեյի արձանը, իսկ ստորոտում կառուցված ե
մի փոքրիկ յեկեղեցի նավահանդստի բնակ-
չության համար: Մենք իջանք այդ սանդու-
ղով, մտանք մի աղեղնաձև լայն փողոց: Այդ
վերջին փողոցն ե դեպի ծովափը, այնուհետեւ
ամբողջ նավահանդստի յերկայնությամբ
բարձրանում ե «Եսթակադան»՝ յերկաթուղու
բեռնակիր գնացքների համար կառուցված
կամուրջը: Գիշեր-ցերեկ այս հսկայական
կամուրջի վրայով սուլելով անցնում են չո-
գեկառքերը, քարշ տալով վագոնների յեր-
կայն շարքերը, իսկ ներքե, բազմաթիվ կա-
մարների տակով անց ու դարձ են անում
բեռնակիր սայլեր, նավաստիներ, բանվոր-
ներ: Այդ մի աղմկալի վայր ե, մի բարդ

անգույց ծովային և ցամաքային կյանքերի
միջև: Շողենալերի թանձր ծուխը, նավաս-
տիների կոշտ ձայները, եսթակադայի խուլ
թնդյունները գնացքների ծանրությունից,
կայսրաններում կուտակված քարածխի
կայսրաններում կուտակված քարածխի
փոշին՝ այս բուլորը ընդհանուր առմամբ ան-
սովոր մարդու վրա ճնշող տպավորություն
են գոլծում:

Իցո՞ Մարգուլիսը մեզ առաջնորդեց քա-
րածխի փոշով ծածկված փողոցի խորքը:
Յերբ յեկեղեցուց հեռացանք յերկուհարյուր
քայլ դեաչ աջ, մեր առջև բացվեց ողետների,
ստորին տէսակի թեյատրոնի ու պանդոկների
մի ամբողջ ավան: Այստեղ եր վիստում նավա-
մի հանդստի բնակչության մեծ մասը: Պանդոկ-
հանդստի բնակչության մեծ մասը: Պանդոկ-
ներից լսվում եյին հարմոնիայի և ոռւսական
վողորմելի «բալալայկա»-ի հնչյուններն ամ-
բոխի աղաղակների, յերգերի, գոռում-գո-
չյունների, հետոնների ու անեծքների հետ:
Նրանք, վարոնք ժամանակ ու միջոց ունեյին,
ուտում, խմում ու հարրում եյին պանդոկ-

ներում, վայելելով եժանադին հուրիների ընկերության հաճույքը: Իսկ նրանք, վորոնք միմիայն խմելու համար փող ունեյին, մըսնում եին «Մոնոպոլի» կրպակները: Այսաւել վերջնելով կնքված շշերը դուրս եյին գմիս փողոց և բովանդակությունը դատարկում էրանց բերանները: Ողին արգելվում ե խմել «Մոնոպոլի» կրպակներում, ուստի հայրեցողությունը, վոր առաջ քիչ թե շատ ամոթ ուներ և թաղնկում եր ողետների պատերի մեջ, այժմ թաղավորում ե փողոցում ամենայն համարձակությամբ: Յեվ ահա նրա վորորմելի զոհերը թավալված են կրպակների առջև, մայթերի վրա, փողոցի մեջ տեղում սայլերի ու կառերի տակ ջարդիլու վտանգին յենթակա:

Իցկոն կանգ առավ մի մեծ պանդոկի առջև, վորի դռների ճակատին դրված եր. «Արքայական յախտա»:

— Ահա այսուեղ ե լւոնը, — ասաց նա.

անցյալ շաբաթ «Վոսկե խարիսխումն» եր նվագում:

— Հըմ՝ — արտասանեց Զառւշենկոն, դառնալով ինձ, — տատանվո՞ւմ եք: Վախենո՞ւմ եք մտնել: Քա'ջ յեղեք, ձեզ չեն ուտիլ, մեզ նման մարդիկ են...

Նա դավազանը բարձրացրեց և հաղթական քայլերով մտավ իցկոյի հետ պանդոկի: Յես մի քիչ նրանից լավ եյի հագնիւած: «Աղա» չհամարվելու համար վերաբերուի ոձիքը բարձրացրի, գլւարկիս յեղը քաշեցի աչքերիս, հուսալով, վոր ամենաշատը հույն վորմնադիր կհամարեն. ինձ:

Պանդոկը լի յեր հաճախորդներով: Առաջին պահ վոչինչ չկարողացա վորոշել, այնքան մթնոլորտ տոգորված եր ծխով, վոշով ու կերակուրների շոգիով: Դժվար եր ընդհանուր աղմուկի, դոռում-դոչյունների ու հայնոյանքների մեջ մի բան հառկանալ: Այցելուների մի մասը խմբվել եր բուֆետի առջև, վոր գտնվում եր ուղիղ մուտքի դիմաց:

րալիր թևերից, վոր բացվել եյին ինձ գրկելու համար: Զառւշենկոյի նիհար մարմինը պնդակաղմ: Նավատիների ուսերի հարվածներից տաշեղի պես թռչկոտում եր: Յերբեմն նա իրան դիմող մեջքերին գեմ եր տալիս զավաղանի կոթը, ինքը հետ կանգնում: Իցկոն, յուր փոքրության չնորհիվ, կատվի ճարպկությամբ սլկում եր առաջ մարդկանց արանքով: Յես հաղիվ եյի կարողանում քիթ ու պռունդս աղատ պահէլ ողի մեջ անիմաստ շարժվող ձեռների ու արմունկների պատահական հարվածներից:

Մենք անցանք յերկու շարք կեղտոտ ու մերկ սենյակների միջով, վորոնց շուրջը նըստած եյին նավատիներ և յերկաթուղու ծառայողներ: Մի քիթը ուռած, կարմրած, աչքերի տակերը կապտած կին, ինձ տեսնելով, դոչեց:

— Եյ, բասուրման, արի միասին «տրեպակակա» պարենք:

— Յես հաղիվ կարողացա աղատվել նրա սի-

թու թուն, ո՞ւր ե քո վետուրը:

— Քեսի Սիդորի կատուն պոկոտել ե, — ասաց իցկոն, ծիծաղելով:

Քեսի Սիդորը «Արքայական յախտայի» տերն եր, կատուն՝ ողին:

Վերջապես, հասանք ընդարձակ պանդոկի համեմատաբար մի ապահով անկյուն, ուր մեր կողերը ջարդվելու վտանգից ազատվեցին: Այստեղ մի յերկար սեղանի քով նստած եյին տասնի չափ նավաստիներ: Սեղանը ծածկված եր կեղտոտ ամաններով, հացի կտորներով, ուտելիքների ու ծխախոտի մնացորդներով, գարեջրի և ողու շիշերով ու բաժակներով:

— Ահա և՛ ձեր արտիստը, — ասաց իցկոն, ցույց տալով սեղանի ծայրը:

Այնաեղ նստած եր լեռնը: Նա կիթառ եր նվազում և զվարձացնում սեղանակիցներին:

Զնայելով յուր չքավորությանը, յես մինչեւ
այդ որը նրան կեղտոտ չեյի տեսել: Գոնե շա-
պիկը միշտ անարատ եր, ձեռներն ու յերեսը
մաքուր, կոչիկները վաքած, փայլուն: Իսկ
այժմ նա նմանվում եր գործարանական բան-
վորի:

Իմ յերևալը նրան զարմացրեց: Նա չընդ-
հատեց նվազումը, բայց չափազանց չփոթ-
վեց, կարմրեց: Նավաստիները նրան լսում
եյին ուշադիր, թեև արդեն բոլորն ել հար-
բած եյին: Իրանց հիացմունքն արտահայտում
եյին գոռում-գոչյուններով: Յերեսն մեկը
կամ մյուսը վեր եր կենում, գրկում ու համ-
կամ բուրփում նրա հետ կամ, մեջքին զարկելով,
արտասանում եր.

— Մալադե'ց, Լելա, մալադե'ց . . .

Չառշենկոն մեզ հրավիրեց նստել մէ
գատարկ սեղանի քով, ասելով թե Լեռնին չի
կարելի խանդարել, նավաստիները կկատա-
ղեն: Մի շիշ գարեջրի պատրվակով կարելի
յեր նստել, և մենք նստեցինք: Լեռնը շարու-

նակ մեզ եր նայում ու ժպտում: Այդ տասն
որվա ընթացքում նա ակելի նիհարել եր ու
թորշոմել: Առաջին անգամ այդ որը նրա բե-
րանի անկյուններում նկատեցի թեթև խոր-
շեր:

Սեղանի մոտից վեր կացակ լայն թիկուն-
քով ու մեծ միբուքով մի նավաստի և որոր-
վելով մոտեցավ Լեռնին: Զեռը դնելով պա-
տանու նիհարիկ ուսի վրա, գոչեց.

— Եյ, ճպուռ, նվագելո՞ւ յես ինձ հա-
մար՝ «Ո՛չ, իմ վիշտ» թե՞ չե. յես ուզում
եմ՝ «Ո՛չ, իմ վիշտ» լսել:

— Տե՛ղդ նստիր, եյ, Սիբիրի ոելս, — գո-
չեցին ընկերները, — մի՛ խանդարիր Լեկա-
յին:

— Զեմ նստիլ, մինչեւ վոր չլսեմ՝ «Ո՛չ,
իմ վիշտ»: «Ո՛չ, իմ վիշտ»: Լելա, Լելա,
«Ո՛չ, իմ վիշտ»:

— Հիմարի գլուխ, — նկատեց մեկը, —
Լելան հենց «Ո՛չ, իմ վիշտ» և նվագում,
Զե՞ս լսում, անո՞ւս . . .

Զնայելով յուր չքավորությանը, յես մինչեւ
այդ որը նրան կեղտոտ չեյի տեսել: Գոնե շա-
պիկը միշտ անարատ եր, ձեռներն ու յերեսը
մաքուր, կոչիկները վաքսած, փայլուն: Իսկ
այժմ նա նմանվում եր գործարանական բան-
վորի:

Իմ յերևալը նրան զարմացրեց: Նա չընդ-
հատեց նվագումը, բայց չափազանց շփոթ-
վեց, կարմրեց: Նալաստիները նրան լսում
եյին ուշադիր, թեև արդեն բոլորն ել հար-
բած եյին: Իրանց հիացմունքն արտահայտում
եյին գոռում-գոյզուններով: Յերբեմն մեկը
կամ մյուսը վեր եր կենում, գրկվում ու համ-
բուրվում նրա հետ կամ, մեջքին զարկելով,
արտասահնում եր.

— Մալադե՞ց, Լեվա, մալադե՞ց...

Զառւշենկոն մեղ հրավիրեց նստել մէ
գլատարկ սեղանի քով, ասելով թե Լեռնին չի
կարելի խանգարել, նալաստիները կկատա-
ղեն: Մի շիշ գարեջրի պատրվակով կարելի
յեր նստել, և մենք նստեցինք: Լեռնը շարու-

նակ մեղ եր նայում ու ժպտում: Այդ տասն
որվա ընթացքում նա ավելի նիհարել եր ու
թորշոմել: Առաջին անգամ այդ որը նրա բե-
րանի անկառուններում նկատեցի թեթև խոր-
շեր:

Սեղանի մոտից վեր կացավ լայն թիկուն-
քով ու մեծ միբուքով մի նավաստի և որոր-
վելով մոտեցավ Լեռնին: Ձեռը գնելով պա-
տանու նիհարիկ ուսի վրա, գոչեց.

— Եյ, ճպուռ, նվագելո՞ւ յես ինձ հա-
մար՝ «Ո՛հ, իմ վիշտ» թե՞ չե. յես ուզում
եմ՝ «Ո՛հ, իմ վիշտ» լսել:

— Տե՛ղե նստիր, եյ, Սէբիրի ոեխ, — գո-
չեցին ընկերները, — մի՛ խանգարիր Լեվա-
յին:

— Ձեմ նստիր, մինչեւ վոր չլսեմ՝ «Ո՛հ,
իմ վիշտ»: «Ո՛հ, իմ վիշտ»: Լեվա, Լեվա,
«Ո՛հ, իմ վիշտ»:

— Հիմարի գլուխ, — նկատեց մեկը, —
Լեվան հենց «Ո՛հ, իմ վիշտ» և նվագում,
Զե՞ս լսում, անո՞ւս...

— Լեվա, սուտ չե՞ ասում:

Լեան զլիսով հաստատեց, թե նվագածը Հենց «Ո՛Հ, իմ վիշտն» ե:

— Սատանան տանի, — գոռաց Սիրիրի ոեխը, — ի՞նչ բավ եյիր նվագում: Լսեցինք, լսեցինք. Հիմա նվագիր «Դունայի գեղեցկուհի»: Լեվա, Լեվա, «Դունայի գեղեցկուհի»:

— Այ քեզ «Դունայի գեղեցկուհի», — ասաց մի հաղթանդամ և, հետեւց ձեռները պցելով Սիրիրի ոեխի կոների միջով, փորե դեմ տվեց մեջքին, բարձրացրեց ու բերեց նստեցրեց յուր տեղը:

— Եր դու Կալուգայի արջ, ի՞նչպես համարձակվեցիր, — գոռաց Սիրիրի ոեխը, — թաթերդ կիշրեմ:

Յեվ բոռնցքն այնպիսի ուժով դարկեց սեղանին, վոր շշերն ու բաժակները միմյանց դիպչելով փշրտվեցին:

Բարձրացավ աղմուկ, վեճ, իրարանցում: Ողի մեջ յերկացին մի քանի սպառնացը: Դուցե «Սիրիրի ոեխ» և

«Կալուգայի արջը» միմյանց քիթ ու պոռւնգ ջարդելին, յեթե չլիներ մի ալեոր նավաստի, վորին ընկերները «Դյաղուշկա» եյին անվանում: Նա մեջ մտավ նրանց բաժանելու: Ոգնության հասավ Լևոնը: Նա նվագումը ընդհատեց և, տեղից վեր կենալով, ասաց.

— Պարոններ, թույլ տվեք ինձ գնալ Հյերսոնցիների» մոտ:

Վեճն իսկույն դադարեց բոլորը ըրջապատեցին յերաժշտին:

— Լեվա, աղավնյակ, մի՛ անիր, Լեվա, հոգյակ, նվագիր. ի՞նչպես կարելի յե, — խնդրեցին բոլորը:

— Նվագի՛ր... ի՞նչպես նվագեմ, պարոններ, քանի վոր չեք լսում, կովում եք անկիրթ «բոսյակների» պես: Մի՞թե վայել ե «Ռուսաց ընկերության» նավաստիներին:

— Վայել չե, իհարկե, վայել չե, — գուշեց «Դյաղուշկան»:

— Դուք ինձ «Ճիրասպուցիների» մոտից բերեցիք այստեղ, վոր ձեր կոի՞վը տեսնեմ:

Դուք լավ չեք գնահատում յերաժշտությունը:

«Խերսոն», «Տիրասպոլ» նավեր եյին, և նավաստիները կրում եյին իրանց նավերի առունները:

— Կդնահատենք, կդնահատենք, Լելա, Հիմարներ չենք...

— Ի՞նչ ե, վի՞զ ե ուզում այդ ճպուռը, — գոչեց Սիրիրի ուեխը, և վարտիքի գրաւանից հանելով արծաթե գրամներով լի քսակը, վեց Լեռնի գերեզ, — ահա՛, վերցրո՛ւ, խեղդվի՛ր...

—Մենք ել կտանք, մենք նև կտանք, — աղաղակեցին ամենքը, ձեռները տանելով իրանց գրավանները:

— Տեսե՛ք, տեսե՛ք, Լեռնը հարստանալու յե, — գոչեց իցկոն, հրճվանքից ձեռները միմյանց զարկելով, յերբ տեսավ փողի քսակները:

— Հապա, կտեսնենք, թե ինչպէս, — արտասանեց Զառւշենկոն, վոր, արմունկները

սեղանին հենած, գիտում եր կատարվող անսարանը:

Լեռնը հանգիստ վերցրեց յուր գիրկն ընկած քսակները և դնելով սեղանի վրա, ասաց.

— Ես իմ գնից մի կոպեկ ել ավել չեմ վերցնիլ: Համարը 10 կոպեկ, վո՛չ ավելի, վո՛չ արակաս: Դրեք ձեր գրավանները, նստեցի՛ք, նվազում եմ...

— Բըա՛վո, Լեռն, բըա՛վո, դու մեր յերեսը սե չարիը, — գոչեց Զառւշենկոն վոգեւ վորված և նավաստիների ուշադրությունը դրավեց մեր վրա:

— Այդ ի՞նչ կատու յե, — գոչեց Սիրիրի ուեխը, — ա՞հ, տիրացո՞ւ: Ձե՛ւ ուխտավոր ե, աբեղա յե... Ե՛յ, յերեկի, իոքագամայի տաճարի համար լումա ժողովելու յես յեկել: Արի՛, արի՛, մենք ել կտանք մեր հոգության համար:

Զառւշենկոն վերցրեց սեղանի վրայից

յուր գրքույկները և հանդիսավոր քայլերով
մոտեցավ նախատիներին:

— Պարոննե՛ր, յես վո՞չ տիրացու յեմ,
վո՞չ տաճարի համար լումա ժողովող: Յես
յերպիչ եմ...

— Յերգիչ, յերգիչ, այդ շատ լավ ե,
ասացին վոմանք: — Դեհ, յերգիր, տեսնենք:

— Յերգիր՝ «Ո՞հ, իմ վիշտ», — պահան-
ջեց Սիրիրի ռեխը, — «Ո՞հ, իմ վիշտ»:

— Ո՞հ, խավար. ահա իմ վիշտը, — ար-
տասանեց բանաստեղծը: — Պարոննե՛ր, յես
ձայնով չեմ յերգում, այլ գրքույկներից:
մի-մի որինակ ահա այս գրքույկներից:
Դուք, պարոններ, ինչպես տեսնում եմ, յե-
րաժշտություն սիրում եք. մի՛ մոռանաք,
վոր բանաստեղծությունն ել նրա քույրն ե:

— Քո՞ւյրն ե, — ասաց Սիրիրի ռեխը, —
ապա տո՛ւր ինձ այդ գեղեցիկուհուն...

Նա խլեց գրքույկներից մեկը, դրեց գա-
տարկ ամանի մեջ, վրան ողի թափեց և,
լուցկին վառելով, ասաց

— Ապա, տեսնենք, քույլո՞ն ինչպես ե յեր-
գում:

Ողին այնքան թունդ չեր, վոր վառվեր:
— Քեռի՛ Սիրոր, — գոչեց Սիրիրի ռեխը,
— կատվիդ մագիկները հանել ես... խի-խի-
խի՛, սպիրտ բեր...

— Ե՛յ, Սիրիրի ռեխ, — ասաց «Դյա-
դուշկան», — այսոր դու մեզ ուզում ես խայ-
տառակել: Գրքերը սուրբ են, հանցանք ե
նրանց այրելը... Գնե՞նք մի-մի որինակ...

Նավաստիները գնեցին մի-մի որինակ
«Վշտի և տանջանքների ժամերից», իսկ ան-
հանդիսատ Սիրիրի ռեխը մի մեծ բաժակ ողի
ձեռքում մոտեցավ հեղինակին:

— Կոնծի՛ր, դնչիցդ յերևում ե, վոր սի-
րում ես...

Զառուշենկոն խմող չեր: Յերկու ձեռները
դեմ տվեց բաժակին, գոչելով.

— Հեռո՛ւ ինձանից համառուսական
թույն...

Այն ժամանակ Սիրիոս ռեխը կպալ լեռնին.

— Խմբ'ր, դու մինչեւ այսոր դեռ չես հաղորդվել... թե քը իստոնյա յես, պիտի խմես...

— Լեվա, Լեվա, մի բաժակ մեր խաթռու, — խնդրեցին մյուսները:

Լևոնը հրաժարվեց, ասելով, թե խմելուց հետո չի կարող նվազել: «Դյաղուշկան» նրան պաշտպանեց:

Որն արդեն մթնել եր: «Դյաղուշկան» հայտնեց, թե չոգենալ վերադառնալու ժամանակ ե: Խումբը վճարելով կերած-իոմածի գինը, նաև Լևոնի վարձը, գուրս յեկավ աղմուկով, գուռում-դոչուններով, միմյանց բոթելով ու հարվածելով:

Փողոցում Զառւշենկոյի գլուխը պտտվեց այնպէս, վոր անշուշտ կընկներ, յեթե չհենվեր պատին: Խմբչքների հոտը և ծխախոտի ծուկը շշմեցրել ելին նրան: Բայց նա կըկտնում եր.

— Շատ ուրախ եմ այստեղ գալուս, շատ ուրախ եմ, ամեն որ պիտի գամ: Վո՞րքան նյութ, վորքա՞ն նյութ գրողի համար:

Իցկոն վոստոստում եր Լևոնի շուրջը: Վերջապես, ձեռքը դցելով նրա թերին, հարց-լեց.

— Այսոր ինձ համար չոկոլա՞ղ ես առնելու, թե՞ ծիախոտ:

— Յերկուսն ել:

— Թիա՞մ, Փիա՞մ, ուրեմն այսոր յերկու ուռելուց ավելի յես հավաքել... Կեցցետրիս: Յես այսոր վոչինչ չեմ վաստակել: Բանաստեղծ, պիտի ինձ համար մի սրինդոնես: Յես ել ուզում եմ սրինդ նվազել:

— Կզնեմ, ինչու չեմ գնիլ, — ասաց Զառւշենկոն բարեսրտաբար:

— Զիմբա—չիմբա—չիլալա, Զառւշենկո, չիլալա'...

Յերբ ընկերները բաժանվեցին, յես հետաքրքրվեցի իմանալ՝ ինչու Լևոնը փոխել ելուր արհեստը: Զեյլի ուզում հավատակ, վոր

առանց վերին աստիճանի ստիպողական մի
պատճառի կարող են նաև ցերեկներն անդամ
ապրել թատրոնից հեռու:

— Կարիքն եւ ստիպում, սինյոր, — պա-
տասխանեց նա հանդարս:

— Բայց չե՞ վոր գուշ առաջ ել կարիք
ունելիք:

— Յես ուզում եմ մորս կամքը կատարել:

— Այսի՞նքն:

— Ուզում եմ նրան ապահովել:

Յես նայեցի նրա աչքերի միջին և հաս-
կացա, վոր կեղծում եւ Փողոցային լապտերի
լույսը մատնեց նրա այլայլվելը:

— Ե՛հ, շատ գովելի յես, — ասացի յես,
վոր ուզում ես մորդ ապահովել: Բայց նե-
րի՞ր, Լեռն, այս անդամ շատ ել չեմ հավա-
տում քեզ: Կարծում եմ, ուրիշ նպատակ ու-
նիս:

Նա վոչինչ չասաց, միայն քայլերն արա-
գացրեց:

— Ո՞ւր ես շտապում, — հաբցրի յես:

— Թատրոն:

— Ե՞լի թատրոն:

— Այո՛, սինյոր... այսոր լավ դրամա-
յեն ներկայացնում...

Յեվ, յերեխ, իմ հարց ու փորձերից ա-
զատվելու համար, շտապով հեռացավ: Յես
արդեն գուշակել եյի նրա միտքը...

Մի քանի անգամ այցելեցի «Արքայական
յախտա»: Լեռնին այնուեղ սիրում ելին:
Նավաստիները խլում եյին նրան միջանց
ձեռքից: Նա գիտեր նվազել մալուստական
յեղանակներ ու պարեր: Անցնում եր մի խըմ-
րից մյուսը, բոլորին զվարճացնում, հավա-
քելով յուր տասնական կոպեկները: Զվար-
ճության տաք միջոցներին սեղանակիցներն
յերբեմն խնդրում եյին նրան խմել մի-մի բա-
ժակ ողի կամ գարեջուր: Նա չեր ուզում խը-
մել և չեր ել կարողանում խմել:

Մի անգամ իմ ներկայությամբ, յերբ
զգլանքով հետ դրեց ողու բաժակը, նրա հա-
մար պահանջեցին ինչ-վոր քաղցր ըմպելիք:

Նա մի բաժակ խմեց, հետո յերկրորդն և
զվարթացավ...

Յավալի յեր ինձ համար, վոր նա այցե-
լում է այդ ստորին վայրերը: Բայց իրա-
վունք չեցի համարում համոզել նրան թողնե-
լու այդ տեղերը: Ուրիշ ի՞նչ միջոց ուներ նա
ապրելու, բացի նախկին վողործելի պարագ-
մունքից:

Մի որ նա առաց.

— Սինյոր, յերկու ամիս չկա, արդեն յե-
րեսուն ոռոքը յեմ հետաձգել: Բայց մորս
չասեք:

— Ինչու:

— Վորովհետեւ այդ փողերը ինձ հարկա-
վոր են...

— Իտալիա գնալու համար, — լրացրի
յես նրա խոսքը, խնդիրը միանգամից պար-
զելու համար. — մի՛ զարմանար, լեռն, յես
այդ վաղուց գիտեյի:

— Ո՞ո, սինյոր, իրավ է, յես ուզում եմ
տեսնել իտալիան...

— Յեվ լուիզային...

Նա ամոթից յերեսը դարձրեց ինձանից:
Յես Հաղորդեցի նրան, թե սինյորա Ստեֆա-
նիան Կավալարոյից նոր նամակ է ստացել:
Բարիտոնը գրում է, թե յերդեցողության
ուսուցիչները փորձել են որիորդի ձայնը և
հիացել նրա ուժով ու «տեմբրով»: Մի
հայտնի պրոֆեսոր խոստանում է յերեք տար-
վա ընթացքում լուիզային այնչափ պատրաս-
տել, վոր կարողանա ոպերաներում առաջին
«դրամատիկ-սոպրանո»-ի դերը յերգել:

Հաղորդածս նորություն չեր նրա հա-
մար: Նա ասաց, թե նույն որն ինքը նամակ
է ստացել Լուիզայից: Բարի որիորդն յուր
խոստումը կատարել եր: Սակայն այդ յեղավ
առաջին և վերջին նամակը...

Ամբողջ գարունն և ամառը պատանին
այցելեց նավահանգստի պանդոկները: Յեր-
բեմն գալիս եր սենյակս և ինձ հաշիվ տալիս:
Նրան զեռ սիրում են նավաստիները, հա-
ճույքով լսում և միմյանց ձեռքից խլում: Ամ-
4 Երտիստը

սական միջին թվով քսան ոռւրլուց ավելի յե
հետաձգում։ Շուտով, շուտով կկատարի
յուր փախադը, կուղեռվիր իտալիա...

Այն ինչ՝ պանդոկների մթնոլորտն արդեն
դրել եր յուր դրոշմը նրա վրա։ Զեերը նկա-
տելու չափ գուհկացել էյին ժամանակ առ
ժամանակ արտասանում եր տպեղ բառեր,
վոր առաջ չկային նրա բառարանում։ Արտա-
սանում եր և իսկույն զղջում, կարմրում։
Մի քանի անդամ զղացի, վոր բերանից
խմիչքների հոտ ե դալիս։ Իսկ մի յերեկո
մեր տան դարպասի առջև տեսա նրան սաս-
տիկ հարբած դրության մեջ։ Կիթառը կոնա-
տակին բռնած, որորվելով, տուն եր գնում,
մի քայլ առաջ դնելով, մի քայլ կողք, որոր-
վելով։ Ողնեցի նրան սանդուղով բարձրանա-
լու։

Ալմաստը տեսավ նրան թի չե ձեռները
զարկեց յերեսին, գոչելով.

— Սպանեց, մորթեց...

Նախատինքի ժամանակ չեր։ Խնդրեցի

վշտացած մորը զսպել առ այժմ յուր սրտի
թույնը։

Լեռնը թավալվեց յերեսնիվայր անկող-
նում, մի վոտը թողնելով հատակի վրա։ Տե-
սարանը յեղկելի յեր։ Լեռնը, այն պատանին,
վորին յերեակայությունս դրեթե հրեշտա-
կացրել եր, ընկնում եր աչքումս։ Յեկ այս
ինձ համար գառն եր, շատ դառն։ Նա վո-
չինչ չեր զգում, ընկած եր կեղտոտ լաթի
պես, վոտից մինչեւ գլուխ ցեխոտ։ Միայն
յերբեմն ձեռը դուրս եր բերում մորի տակից
և չոչակում ձախ կոչկելը...

Յես թողեցի տիսուր տեսարանը և հեռա-
ցա։ Մի՞թե այս ե բարեկամիս վերջը։ Մի՞-
թե Ալմաստի չար դուշակությունը իրագործ-
վում ե։

Առավոտն յերբ բարձրացա վերև, Ալ-
մաստն արդւն թեթեացրել եր յուր սիրտն և
աչքունքը կիտած լուռ նստած եր մի ան-
կյունում։ Լեռնը վնտուում եր կիթառը, վոր
գնա յուր դործին, չեր գտնում։ Ալմաստը

թաղցրել եր, չեր ուզում տալ: Տեսնելով
ինձ՝ խեղճ կինը լաց յեղավ: Այս անդամ
խոսքեր չգտա Լևոնին արդարացնելու:

— Զեյի՞ ասում, վոր վերջն յուր անիծ-
ված հոր որին և համառում: Ահա՛ չըրբորդ
անդամն ե՝ տուն ե դալիս շան որում...

Յես բարլոք համարեցի Լևոնի հետ խոսել
առանձին, հրավիրելով սենյակս: Հիշում եր
յերեկվա յուր խայտառակ դրությունը և
սաստիկ ամաչում: Լուռ եր, սպասում եր,
վոր յես խոսեմ: Ի՞նչ պիտի ասեյի. նախա-
տելը կլիներ ավելորդ. Լևոնը հիմար դլուխ
չեր և վոչ ել յերեխա. շուտով պիտի լրանար
տասնութ տարին: Յես ընկերաբար բացա-
տրեցի հարբեցողության կորստարեր հետե-
ղանքները: Նա լսեց մինչեւ վերջը համբե-
րությամբ և, յերբ վերջացրի, ասաց.

— Այդ բոլորը դիտեմ. հայրս հենց
հարբեցողությունից մեռավ:

— Գիտես և ելի խմո՞ւմ ես:

— Ստիպում են:

— Ովքե՞ր:
— Նավաստինելով:
— Տեղափոխվե՛ր ուրիշ պանդոկ:
— Ամեն տեղ ստիպում են:
— Մի՞թե չես կարող մերժել:
— Առաջ մերժում եյի, հիմա չեն թող-
նում:

— Ի՞նչ ատել ե՝ չեն թողնում. ամեն
մարդ յուր կամքի տերն ի:

— Այո՛, սինյոր, բայց յերբ կես կիթանող
բուռնցքը պահում են քթիդ տակ, մոռանում
են կամքը:

— Նրանք քեզ ծեծո՞ւմ են:
— Կծեծեն, յեթե շատ համառություն
անեմ:

— Բայց ի՞նչ ողուտ ունին քեզ հարբեց-
նելուց:

— Հարբածներն ատում են արթուն մար-
դուն: Յերբ չեմ խմում, ասում են՝ «դու
մաքումդ ծաղրում ես մեզ: Դու եւ խմիր,
հավասարվիր մեզ հետ»:

— Գոնե քի'չ խմիր։
 — Շատ չեմ խմում, բայց քիչն ել ինձ հարթեցնում ե։
 — Ի՞նչ են խմեցնում։
 — Առաջ քաղցր խմիչքներ եյին տալիս։ Հիմա ասում են՝ «թանդ ե նստում» և ստիպում են խմել գարեջուր ել, ողի ել...
 Յես լոեցի, բայց հարկավոր եր մի հետևանքի հասցնել մեր խոսակցությունը։
 — Էսոն, թո՞ղ այդ պանդոկները, ելի թատրոններով զբաղվիր...
 — Իհարկե, թողնելու յեմ, սինյոր, շուտով, շուտով կգնամ իտալիա... Արդեն հարյուր հիսուն ռուբլի ունիմ։
 — Իսկ մա՞յրդ։
 — Նրան ել հետս տանելու յեմ։
 — Հարյուր հիսուն ռուբլո՞վ։
 — Ի՞նչ կա, քի՞չ ե։ Յես շատերից եմ հարցրել։ Ասում են ամսական յերեսուն ռուբլով կարող լնք ապրել այնպես, ինչպես այստեղ։

— Գուցե կարելի յե, բայց մի քանի ամիս, իսկ հետո՞։
 — Հետո՞... մի գործ կդանեմ։
 — Լեռն, ճշմարիտն ասա, ի՞նչն ե քեզ ստիպում իտալիա դնալ, — հարցրի յես, նայելով ուղիղ նրա աչքերի միջին։
 — Ուզում եմ վիոլոնչել նվազել սովորել ու դալ այստեղի որկեստրը մտնել։
 «Կեղծում ես, բարեկամս, — մտածեցի յես, — այդ չե գլխավոր պատճառը»։
 Նայեցի նրան ռւշաբեր, սիրաս մորմոք-վեց։ Նա վոտքի վրա ցամաքել եր, ինչպէ, արմատից պոկված ծաղիկ։ Խնդրեց ինձ համոզել մորը, վոր կիթառը տա իրան։ Մի-կնույն ե, յեթե չտա, պիտի նորը գնել։ Ին-չո՞ւ ամելորդ ծախսի մէջ ընկնել։
 Հազիվ այդ որից անցել եր մի շաբաթ, յերբ մի յլրեկո, տասը ժամին, հանկարծ սենյակս մտավ Ալմաստը շփոթված։
 — Պարոն, նեղություն քաշեցեք, վերև բարձրացնեք աստծո սիրույն։
 Տաքորինակ դրության մեջ տեսա յես

Լեռնին այդ յերեկո։ Հեղ պատանին կատարելազես կատաղել եր։ Առանց բաճկոնի ու կոչիկների թաղալվել եր դռների առջև և մոնջում եր ինչպես մատաղ գաղան, կրծոտելով յուր ձեռների միսը։ Նրա նիշար պարանոցի յերակներն ուռել, փալել եյին, կարծես ահա, ահա պիտի տրաքվելին ձըդված լարերի պես։ Նա վոտները գարկում եր հատակին ինչպես դիլահար։

Պատահել եր մի շատ սովորական դեպք, վորի նմանները պատահում եյին Ողեսսայի խուլ անկյուններում դրեթե ամեն յերեկո։ Նավահանգստից վերադառնալիս Լեռնի վրա հարձակվել եյին ինչ-վոր քաղցած սրիկաներ, խել ձեռքից կիթառը, հանել բաճկոնն ու կոչիկները և բաց թողել։

— Յեկ դրա համար քեզ սպանում ես, — գոչեցի յես բռնելով Լեռնի թել, — ամո՛թ։

— Յես ել այդ եմ ասում, վորդի, չեմ նախատում։ Տանը մի հատ պիջակ ել ունիս,

կոշիկներ ել... Վայ, տեր աստված, ինչպես ե գլուխը պատին խիում։ Այս ի՞նչ պատիժ ե, յերկնային թաղալոր...

Կասկածելի յեր, վոր Լեռնը կիթառի, մանավանու վողորմելի պիջակի ու կոշիկների համար այդպիսի հեծ ու կոծ բարձրացներ։ Անշուշտ կորուստն ավելի մեծ եր։ Խորբեցի Արմաստին մի քանի ըսպէ թողնել մեզ առանձին։ Այրին դուրս գնաց։ Ճանաչելով Լեռնի բնավորությունը, գիտելի՝ ինչպես պիտի խոսել այսպիսի հանդամանքներում նրա հետ։ Նա սիրում եր զգալ, վոր մարդիկ իրեն չափահաս են համարում։

— Ամոթ ե, Լեռն։ Փառք աստծու, դու յերեխա չես, խելքի յեկ... Զարժե այլուկես գոռալ...

— Զարժե՞, չարժե՞, սինյոր, դուք ե՞լ Եք ասում։ Բայց չդիտեք ինչ եմ կորցրել, ի՞նչ։ Զախ կոշիկս... այո՛... ձախը... Գիտե՞ք... Խտալիս, վիոլոնչել, յերգ, յերաժշտություն, կորալ ամեն ինչ... բուլվարի

ներքեռումն եր, այն մէծ սանդուղի մոտ:
 Յերկու հոգի ելին՝ մեկը բարձրահասակ,
 մյուսը թիկնավլետ: Բարձրահասակը բռնեց
 հետեւից ձեռներս, մյուսը խուզարկեց գըր-
 պաններս: Յերբ մի ոռւբլուց ավելի չգտան՝
 բարկացան: Կարծում ելի կիթառս կիւլեն,
 կհեռանան: Չեղա՛վ: Պիջակս ել հանեցին...
 Տերը նրանց հետ, թող շապիկս ել հանելին՝
 չելի խոսիլ... Բայց կոշիկներս, ճախ կո-
 շի՛կս... «Հանի՛ր,— ասաց ձեռներս բռնո-
 ղը, — գոնե յերկու բաժակ ողի արժւն»:
 Յերբ թիկնավլետը կռացալ կոշիկներս հա-
 նելու, կատաղեցի, սկսեցի կծոտել նրա
 ուսերը, գլուխը... Նա ինձ ասկտակեց: Ա-
 քերս մթնեցին... Սկսեցի աղաչել, պաղա-
 տել... Չլսեցին անաստվածները... Տարան,
 տարան...

— Ուրեմն կոշիկներիդ համա՞ր ես լա-
 լիս, — ասացի յես մոտավորապես հասկա-
 նալով բանի եյությունը...

— Հարյուր հիսուն ոռւբլի, սինյոր,

հարյուր հիսուն ոռւբլի կար կոշիկիս մեջ,
 ձախ կոշիկիս... Այնաեղ եյի պահում հա-
 վաքած փողերս...

Եեվ նա սկսեց դառնագին հեկեկալ...

Այդպես, ուրեմն, տարել ելին նրա վեց-
 յոթ ամսվա աշխատանքի վարձը, նրա իտա-
 լիա գնալու, լուկացին տեսնելու հույսը...
 Նա ալելի ապահով տեղ չեր գտել յուր փո-
 ղերի համար: Տանը պահել վախեցել եր: Այդ
 կինը կըտներ, չեր վերադարձնիլ: Այդ
 կինը ամեն առավոտ վորդու գրպանները
 խուզարկում եր, մոտը փող չեր թողնում:

— Փաթաթել ելի թղթում, դրել կրուն-
 կիս կողմում, վլեն կաչի խմել, ծայրերը
 դամել... Շատ գիշերներ կոշիկներով եմ
 քնել... Տարա՛ն սրիկաները: Ով գիտե, հե-
 մա ծախում են մի բաժակ ողով կամ մի
 ֆունտ հացով... Տե՛ր աստված, տեր աստ-
 ված, ի՞նչ պիտի անեմ...

Եես խոսքեր չելի գտնում թշվառին
 միակթարելու: Առտություն համարեցի

նախատել նրան յուր անզգուշության համար։ Հարկավոր եր միայն ցույց տալ կորուստը դանելու գեթ մի թույլ հույս։ Արդեն վիշտը շատ մեծ եր։

— Ա՛ա, — գոչեց նա հանկարծ, ձեռք գարկելով ճակատին, — հույս կա, կա հույս դանելու։

— Այո՞, — ուրախացա յես յերեխայի պես։

— Այո՞, սինյոր։ Դուք ճանաչո՞ւմ եք Իցկոյի հորը։ «Մոշկա սելյողկա» են կոչում նրան։ Ճարպիկ մարդ ե, ճանաչում ե փողոցի սրբիկաներին։ Հին հագուստեղեն ու կոշիկներ ե գնում, վաճառում։ Ա՛հ, իսկույն կղնամ նրա մոտ իսկույն։ Մա՛մա, մա՛մա, ներս յեկ, տո՛ւր ինձ մյուս կոշիկս, պիջակըս, գնում եմ կիթառս փնտռելու։

Հակառակ մոր կամքին՝ նա շուտով հագնեց ու վազեց դուրս։

Յես, իհարկե, Ալմաստին չհայտնեցի, թէ Լեռնն ինչ ե կորցրել։ Յերեակայում ե-

յի՝ ինչ վողբ պիտի բարձրացներ և վո՛րքան անիծեր վորդուն։

Վերադարձա սենյակս, հոգով նախանձելով հարուստներին։ Ինչո՞ւ յես ել հարուստ չեյի...

Լույսը նոր բացված գնացի Լեռնին տեսնելու։ Արդեն դուրս եր յեկել տնից։ Ամբողջ գիշեր, Ալմաստի ասելով, չեր քընեկ, պտտել եր անկյունից անկյուն։ Ուշ յերեկո յեր, յերբ Լեռնը մտավ սենյակս հոգնած, քրտնած, փոշոտ։ Նա խոսելու անդամ ուժ չուներ։ Մինչև կեսոր թափառել եր Իցուժ չուներ։ Մինչև կեսոր թափառել եր Իցկոյի հոր, իսկ կեսորից հետո՝ Զառւենկոյի ու Իցկոյի հոր հետ։ Յեղել ելին գրեթե բոլոր այն շուկաներում, ուր հին հագուստեղելուր առուտարարում։ Փնտռել ելին միայն կոշիկները, առանց ում ե ասելուն ինձ գանձ են փնտռում։ Յեկ չո՞ւր։ Իցկոյի ինչ գանձ են փնտռում։ Յեկ հորը խորհուրդ եր տվել Լեռնին՝ «մոռանալ, թե յերբ ե մող ե ունեցել»։ Զառւենկոն հագուստեց եր վոստիկանությանը։

նախատել նրան յուր անզգուշության համար: Հարկավոր եք միայն ցույց տալ կոռուստը գտնելու գեթ մի թույլ հույս: Արդեն վիշտը շատ մեծ եք:

— Ա՛ա, — գոչեց նա հանկարծ, ձեռը դարկելով ճակատին, — հույս կա, կա հույս գտնելու:

— Այո՞, — ուրախացա յես յերեխայի պես:

— Այո՛, սինյոր: Դուք ճանաչո՞ւմ եք իցկոյի հորը: «Մոշկա սելյողկա» են կոչում նրան: Ճարպիկ մարդ ե, ճանաչում ե փողոցի սրիկաներին: Հին հագուստեղեն ու կոշիկներ ե գնում, վաճառում: Ա՛հ, իսկույն կղնամ նրա մոտ. իսկույն: Մա՛մա, մա՛մա, ներս յեկ, տո՛ւր ինձ մյուս կոշիկս, պէջակըս, գնում եմ կիթառս փնտռելու...

Հակառակ մոր կամքին՝ նա շուտով հաղնվեց ու վազեց դուրս:

Յես, իհարկե, Ալմաստին չհայտնեցի, թե Լեռնե ինչ ե կորցրել: Յերեակայում ե-

յի՛ ինչ վողբ պիտի բարձրացնեք և վո՛րքան անիծեք վորդուն:

Վերադարձա սենյակս, հոդով նախանձելով հարուստներին: Ինչո՞ւ յես ել հարուստ չեյի...

Լույսը նոր բայցած գնացի Լեռնին անսեկու: Սրգեն դուրս եր յեկել անից: Ամբողջ դիշեր, Ալմաստի ասելով, չեր քընեկը յեր, յերբ Լեռնը մտավ սենյակս հոգանած, քրանած, փոշոտ: Նա խոսելու անդամ ուժ չուներ: Մինչեւ կեսօր թափառել եր իցկոյի հոր, իսկ կեսօրից հետո՝ Զառւենկոյի ու իցկոյի հոր հետ: Յեղել եյին գրիթե բոլոր այն շուկաներում, ուր հին հագուստեղենի առուտուր ե կատարվու: Փնտռել եյին միայն կոշիկները, առանց ում և ե ասելու՝ ինչ գանձ են վնասում: Յեկ Կա՛ւր: Իցկոյի հայրը խորհուրդ եր տվել Լեռնին՝ «մոռանալ, թե յերբ և ե փող ե ունեցել»: Զառւշնեն հագուստեղել եր վոստիկանությանը:

Պրիստավը ծաղրել եր. վո՞ր հիմարն ե կոչ-
կի մէջ փող պահում:

Լևոնն ամբողջ որն անց եր կացրել ա-
նոթի: Առաջարկեցի ընթրել ինձ հետ, մեր-
ժեց. դուրս յեկավ ուժասպառ, հուսահատ-
ված, հարրածի պես որորվելով:

Մյուս որն յես նրան հանդիպեցի փողո-
ցում մի փոքրահասակ, նիհար, կեղտոտ հրե-
այի հետ խոսելիս: Դա ինքը «Մոշկա սելյող-
կան» եր, իցկոյի հայրը:

— Մոսյո, — դարձավ նա ինձ, յերբ իմա-
ցավ, վոր Լևոնի բարեկամն եմ, — միրուքս
վկա, աղքատն յերբեք փող չպիտի ունենա:
Փողը շատ զոռող ե, սիրում ե թանգարին
պալատներ: Հիմար աղքատը կարծում ե,
թե կարելի յե նրան պահել գարշապարի
տակ, կոշիկում, խի-խի-խի'... Մանուկ,
դու պիտի կուրծքդ պատռեյիր ու ասեյիր
այդ հարյուրանոցին. «Պատռվելի, սիրելի,
համեցեք, ա'յ քո բնակարանը»: Յերանի
յեմ տալիս այն հնավաճառին, վոր այդ կո-

շիկը կդնի: Յերդվում եմ միրուքովս, Սո-
ղոմոն արքան ել այնպիսի թանգարին կո-
չիկներ չի հաղել:

Մի շաբաթ շարունակ Լևոնը վաղ առա-
վոտից սկսած մինչեւ ուշ յերեկո վնատում
եր յուր կորուստը: Զառւշենկոն և իցկոն
հուսահատվել ելին, այլևս չելին ոգնում
նրան, իսկ նա դեռ վնատում եր: Նա զըրկ-
վել եր քնից; Հանգստությունից, ախորժա-
վեց: Տուն եր վերադառնում յերեկոները,
պառկում հագուստով անկողնում, հեկեկում
ու հեկեկում: Ալմատը հուսահատությու-
նից չդիտեր ինչ աներ, տանջվում եր վոր-
դու հետ հավասար: Նա պնդում եր, թե
Լևոնը կխելադարվի, յեթե այդ դրության
մեջ մնա: Ամեն ինչ մոռացել ե, վոչնչով
չի հետաքրքրվում, նույնիսկ թատրոննե-
րով:

Խոստովանում եմ, յես այլևս քաջու-
թյուն չունեյի Լևոնի վիշտը տեսնելու:
Նրա ծանր հառաջանքները, վողը, հեծկը

տանքը կտրատում ելին սիրոս։ Այն ինչ՝
այժմ նա ավելի հաճախ եր այցելում ինձ,
քան առաջ։ Գալիս եր, նստում սեղանիս քով
և խոսում յուր կորստի մասին։ Նա դեռ
պահում եր սրտում մի թույլ հույս փողերը
դանելու։ Ով գիտե, անկարելի վոչինչ չկա.
Կարող են այդ կոչիկները պատել ամբողջ
քաղաքը և դարձյալ հետ դալ, իրանց տիրոջ
ձեռքն ընկնել... Բայց շուտով այդ թույլ
հույսն ել մեռավ նրա մեջ, և կեռնի միտքը
սկսեց փոքր առ փոքր սթափիվել։ Ծանոթ
նայաստիները խնդրում ելին նրան շարու-
նակել հաճախել պանդոկները, խոստանա-
լով նրա համար նոր կիթառ գնել։ Յես խոր-
հուրդ ավեցի նրան ընդունել այդ առաջար-
կությունը և նորից սկսել փող ժողովել։
Մի որ, վերջապես, նա գնաց «Արքայական
յախտա» մի նոր կիթառ ձեռին։ Յերեկոյան
նա պատմեց ինձ, թե նավաստիները ինչպի-
սի ուրախությամբ են ընդունել նրան, ինչ-
պես գրկվել ու համբուրզել նրա հետ։ Նրա

բերանից գարձյալ ողու հոտ եր գալիս։ Յե-
րելի այս անդամ խմել եր վիշտը մոռացու-
թյան տալու համար. յես քաջություն չու-
նեցա նրան համովիմանելու։

Մի չնչին գումար, վոր կարողացավ նա
խնայել առաջին ամիսը, նորից վերակենդա-
նացրեց նրա հույսերը։ Այս անդամ նա ան-
կեղծ խոստովանեց ինձ, վոր իտալիա գնա-
լու գլխավոր նպատակը Լուիզային տեսնելն
է։ Գրեթե որ չեր անցնում, վոր նա չհարց-
ներ.

— Սինյոր, ի՞նչ լուր կա Լուիզայից։

Նա ինքը ամաչում եր անմիջապես սի-
նյորա Ստեֆանիային դիմել այս հարցով։
Յես հաղորդում եյի նրան բոլորը, ինչ լսում
եյի տանտիրուհուց։ Միշտ Լուիզան բարե-
եր ուզարկում կեռնին։ Զգիտեմ, կա՞ր,
արդյոք, մի ուրիշը, վոր այնքան ուրախա-
նար Լուիզայի ամեն մի նոր հաջողության
համար, վորքան այդ սիրահարը։ Նա ասում
եր, թե ամենից ավելի ինքն և սիրում Լու-

իզային և ամենից առաջ ել ինքն ե ուղում
ծափահարել նրան բեմի վրա. վոչ այստեղ՝
Աղեսայում, այլ այնտեղ՝ Իտալիայում:

Մի անգամ նա ասաց.

— Յեթե մինչև առաջիկա գարուն չկա-
րողանամ ճանապարհ ընկնել, կխելադար-
վեմ:

Մի ուրիշ անգամ դիմեց ինձ այս հար-
ցով.

— Ի՞նչ եք կարծում, սինյոր, Լուիզան,
Նշանալոր յերկուհի դառնալով, կդուռըա-
նա՞:

Հասկացա, թե իսկապես ինչ ե ուղում
իմանալ: Հոգու խորքում նա ինքն իրան ար-
ժանի չեր համարում Լուիզային, բայց
հպարտությունը չեր թույլ առլիս նրան
խոստովանել այդ: Նա ուղում եր իմ միտքը
իմանալ՝ արժանի՞ յեմ համարում իրան,
թե՞ վոչ:

Կամենալով գեթ մի փոքր սթափեցնել

այդ՝ որից որ ավելի ու ավելի կուրացող
հողին, պատասխանեցի.

— Այո, կդուռըանա: Նա հենց այժմ ել,
յերբ դեռ չառ հեռու յե նշանավոր յերգչուհի
համարվելու պատվից, դուռըացել ե...

— Ո՞վ ասաց, — զոչեց Լեոնը վշտացած:

— Նրա վարմունքը: Նա քեզ մոռացել ե:

— Ի՞նչ: Ինչո՞ւ. նա միշտ բարեներ ե
ուղարկում, ինքներդ եք ասում:

— Այո՛, բարեկամս, ուղարկում ե. բայց,
ների՛ր, այդ բարեների նպատակն յես ուրիշ
կերպ եմ հասկանում: Լուիզան, դեռ յերգչու-
հի չդարձած, արտիստների խորամանկու-
թյուն ե յուրացնում: Յւս ճանաչում եմ
նույնիսկ տաղանդալոր յերգչուհիներ և
դերասանուհիներ, վորոնք չողոքորթում են
համարանական քաղաքներում ուսանող-
ներին, գալարական քաղաքներում՝ դիմ-
նազիստներին միմիայն նրանց ցույցերին ար-
ժանանալու համար: Իսկ դու քո խմբով ա-
վելի գեղեցիկ ցույցեր գիտես անել: Լուի-

զան այս գիտե և քեզ հետ հեռավոր բարեկամություն և պահպանում յուր պատգայի համար, թեև գիտե, միենույն ժամանակ, վոր դու կաշառվող չես: Ա՛խ, բարեկամս, մի՛ հափշտակվիր այն ուսանողի պես, հիշո՞ւմ ես, վոր անցյալ տարի ինքնասպանություն գործեց մի յերգչուհու պատճառով: Լուիզան քեզ չի սիրում, յեթե սիրեր՝ նամակ կդրեր: Ինչո՞ւ մեկը գրեց ու լսեց:

Գուցե յես զրապարտում եյի Լուիզային, բայց ասածիս մեջ զգում եյի ճշմարտության մաս: Լեռնին փրկելու համար պատրաստ եյի ավելի վատ գույներով պատկերացնել լուիզային նրա առջե:

— Նա ժամանակ չունի ինձ նամակ գրելու, զրադշած ե, — ասաց Լեռնը վոչ այնքան լուիզային արդարացնելու, վորքան յուր անձնասիրությունը պաշտպանելու մտքով:

— Գուցե... թո՛ղ այդպես լինի... —

սացի յես անորոշ յեղանակով՝ Լեռնին ավելի չվշտացնելու համար:

Վորքան հիշում եմ, հենց այդ որն եր, վոր սինյորա Ստեֆանիան մտալ սենյակս անսովոր ուրախ տրամադրության մեջ և ասաց.

— Սինյոր, հիմա կարող եք ինձ շնորհավորել:

— Ի՞նչ ե պատահել...

— Պատահել ե այն, ինչ վոր վաղուց սպասում եյի անհամբեր: Լուիզան յերեկ աղասիկել և Կավալարոյի հետ... հենց այս բողեյին հեռաղիր ստացա... ահա...

Յեկ նա ծոցից հանելով հեռաղիրը ցույց տվեց ինձ:

— Այդպես անսպասելի՝ — գոչեցի յես, թեև վաղուց մի ներքին ձայն ինձ ասում եր, թե կա ինչ-վոր մտերմություն լուիզայի և Կավալարոյի միջև:

— Անսպասելի չեր, սինյոր, վոչ, այդ դո՛ւք չգիտեյիք, իսկ յես գիտեյի, վոր

նրանք նշանված են վաղուց։ Նշանվելն ինձ
համար կարեռը չեր, պատկելն ե կարեռ։
Յես լուսում եյի, վախենալով, վոր գործը չը-
փշանա։ Այս, վերջապես վո'րքան ուրախ,
վո'րքան ուրախ եմ։ Կավալարոն հենց իմ ու-
ղած փեսան ե՝ բարի, քաղաքավարի, լավ
յերդիչ, լավ ել փող ե ստանում։ Այս',
Լուիզան ավելի լավ ընտրություն անել չեր
կարող։ Յերեկ պատկել են, այսոր պիտի ու-
ղեվորվեն Պարիզ։ Կավալարոն պիտի մի տա-
րի մնա այնտեղ։ Լուիզան, իհարկե, նրա
հետ կլինի...

Յես ընորհավորեցի յերջանիկ մորը. բայց
մի ներքին ձայն չչնջաց, թե շատ ել անկեղծ
չեմ վարվում։ Ի՞նչպես կընդունի այդ լուրը
Լևոնը, վորին սիրում եմ ավելի, քան Կավալ-
շարոյին ու Լուիզային։

Այդ որն յես վերադարձա դըսից տուն
ուշ գիշերին, վորապես չհանդիպեմ Լևոնին։
Սակայն հետեւյալ որը նա յեկավ սենյակո
յերեկոյան սովորական ժամից առաջ։ Աինյո-

րա Ստեֆանիան ճաշի միջոցին ինձ ցույց եր
տվել յերկրորդ հեռագիրը, վորով հայտնվում
եր, թե նորապսակներն արգեն ուղեռորվել են
Պարիզ։

Տիուր, անմոռանալի յերեկո. առաջին
անդամ կողոպտվելուց հետո Լևոնի դմքի
վրա տեսա այդ յերեկո ուրախ ժպիտ։ Նա
խկույն պատմեց յուր ուրախության պատ-
ճառը։ Յերկու որ ե՝ նրան կանչում են «Խեր-
սոն» շոգենավը։ Այնտեղ նա նվագում է
նավապետի և յուր ոգնականների համար։
Այսոր ոգնականներից մեկը, տալով նրան
յուր մանդոլինան, առաջարկել եր նվագել։
Լևոնը կատարել եր նրա ցանկությունը։ Նա-
վապետին առանձնապես դուր ե յեկել «Մաղ-
րիդի շրջմոլիկը»։ Նա միշտ բարի մարդ ե.
իմանալով, վոր Լևոնը ձգտում ե գնալ իտա-
լիա, այսոր խօստացավ ոգնել նրան։ ՅԵրկու
որից հետո «Խերսոնը» գնում ե կրոնչտագուտ։
Այնտեղից հետ ե գալու և ուղեռորվելու յե
Միջերկրական ծովը, հետո Հեռավոր Արևելք։

ԱՀա այդ ժամանակ նա կը լերցնի Լեռնին յուր
մոր հետ և կտանի մինչև իտալիայի սահման-
ները...

— Ո՞ո, սինյո՛ր, սինյո՛ր, այնքան ու-
րախ եմ, վոր ուզում եմ թոշկոտել: Յես
նավապետի պարտքի տակ չեմ մնալ: Կնվա-
գեմ նրա համար ամբողջ ճանապարհին,
դիշեր-ցերեկ կնվագեմ: Իտալիա, իտալիա,
անպատճառ պիտի տեսնեմ: Վորքա՞ն կղար-
մանա լուիզան ու ի՞նչպես կուրախանա...

Ծանր եր ինձ համար այս անկեղծ խոս-
քերից հետո թաղցնել իրողությունը Լեռնից,
վոր այդ պահին մարմնացած վողերու-
թյուն եր:

— Լեռն, — ասացի, — չա՞տ ես վափա-
պում տեսնել լուիզային,

— Այո՛, իհարեւ,

— Յեթե չտեսնես, չա՞տ կտիրես:

— Բայց յես կտեսնեմ նրան, սինյոր,
կտեսնեմ Միլանում, — գոչեց Լեռնը հավա-

տով լի, միւնույն ժամանակ, մի տեսակ
յերկյուղով նայելով յերեսիս:

— Լուիզան այժմ Միլանում չե:
— Ո՞վ ասաց:

— Սինյորա Ստեֆանիայի հեռագիրը:

— Հասկա վր՞բտեղ ե:

— Պարիզում:

— Ո՞ւմ հետ...

— Կավալլարոյի...

— Կավալլարո, — գոչեց պատանին
դրեթե չնչասպառ:

— Ամուսնացել ե լուիզայի հետ և յե-
րեկ ուղևորվել Պարիզ մի տարի ժամանա-
կով, — ասացի յես միանգամից սրտիս ծան-
րությունից աղատվելու համար:

Լեռնը ցնցվեց, յերեսի մկանունքները
դողացին: Մի վայրկյանում կարմրեց, կապ-
տեց, հետո սկրթնեց կտալի պես:

— Տեսա՞ր, վոր քեզ չի սիրում Լուի-
զան, վոր դու յերազի մեջ ես...

Լեռնը ճիզն արավ զսպել հուզմունքը:

ԱՀա այդ ժամանակ նա կը երցնի Լեռնին յուր
մոր հետ և կտանի մինչեւ իտալիայի սահման-
ները...

— Ո՞ո, սինյո՛ր, սինյո՛ր, այնքան ու-
րախ եմ, վոր ուզում եմ թոշկոտել: Յես
նավապետի պարտքի տակ չեմ մնալ: Կնվա-
գեմ նրա համար ամբողջ ճանապարհին,
դիշերցերեկ կնվագեմ: Իտալիա, իտալիա,
անպատճառ պիտի տեսնեմ: Վորքա՞ն կզար-
մանա Լուիզան ու ի՞նչպես կուրախանա...

Ծանը եր ինձ համար այս անկեղծ խոս-
քերից հետո թագանել իրողությունը Լեռնից,
վոր այդ պահին մարմնացած վոգերու-
թյուն եր:

— Լեռն, — առացի, — չա՞տ ես իվափա-
գում տեսնել Լուիզային,

— Այո՛, իհարեւ,

— Յեթե տեսնես, չա՞տ կտիրես:

— Բայց յես կտեսնեմ նրան, սինյոր,
կտեսնեմ Միլանում, — գոչեց Լեռնը հավա-

տով լի, միևնույն ժամանակ, մի տեսակ
յերկյուղով նայելով յերեսիս:

— Լուիզան այժմ Միլանում չե:

— Ո՞վ ասաց:

— Սինյորա Ստեֆանիայի հեռագիրը:

— Հապա վո՞րեղ և:

— Պարիզում:

— Ո՞ւմ հետ...

— Կավալլարոյի...

— Կավալլարո, — գոչեց պատանին
գրեթե չնշանակառ:

— Ամուսնացել ե Լուիզայի հետ և յե-
րեկ ուղևորվել Պարիզ մի տարի ժամանա-
կով, — ասացի յես միանդամից սրտիս ծան-
րությունից ազատվելու համար:

Լեռնը ցնցվեց, յերեսի մկանունքները
դողացին: Մի վայրկյանում կարմրեց, կապ-
տեց, հետո սիրթնեց կտավի պես:

— Տեսա՞ր, վոր քեզ չի սիրում Լուի-
զան, վոր դու յերազի մեջ ես...

Լեռնը ճիղն աքալ զսպել հուզմունքը:

Այդ տասնութ տարեկան պատանին, վորի
զգացումներն այնքան անժամանակ հասու-
նացել ենին, ուներ նաև կամքի ուժ։ Սա-
կայն հարվածն ավելի զորեղ եր, նա թու-
լացած ընկղմվեց աթոռի վրա, արտասանե-
լով։

— Այդ նորություն... պետք ե չնորհա-
վորել...

— Այո՛, պետք ե չնորհավորել, — կըրկ-
նեցի յես, ձեւանալով իբր թե չեմ նկատում
նրա հուզմունքը։

— Կավալլարոն լավ մարդ ե, աղնիվ ե, —
ասաց նա գողգոջուն ձայնով, շրթունքները
կրծոտելով։

— Այնքան աղնիվ, վոր Լուիզան չարժե
նրան։

— Աինյոր...

— Զարժե, չարժե, — կրկնեցի յես,
վրդովելով անմեղ իտալուհու դժմ։

— Լուիզան բարձր ե... Լուիզան...
Հրեշտակ ե...

Այլես նա չկարողացավ իրան պահել,
գլուխը զրեց սեղանին ու սկսեց հեկեկալ
այնպես ուժովին, վոր թվում եր, թե նրա
մարմինը կտոր-կտոր ե լինում։

Յես զգացի անզուսպ ատելություն գեղի
Լուիզան կարծես, նա ինձ հասցրել եր բա-
րոյական ծանր վիրավորանք։ Սկսեցի ան-
ինա և միանդամայն անարդար պախարակել
մի եյակի, վոր իրապես արժանի յեր սիրո
և հարգանքի։ Նկարագրեցի նրա աննշան
թերությունները խոշորացույցով մեծացրած,
հնարեցի չեղած թերություններ։ Լսելով ինձ,
կարելի յեր կարծել, թե չկա աշխարհի յերե-
սին և չի յեղել ավելի ամբարտավան, ավելի
հիմար և նույնիսկ ավելի տղեղ ու հակակրե-
լի աղջիկ, քան Լուիզան։ Յեկ այս
բոլորը՝ Լուիզան հիասթափեցնելու համար։
Յես ջախջախում եյի նրա կուռքը, ձը-
գում նրա վոտների տակ, վորպեսզի
վոչնչացնեմ նրա սրտում խորին հավատը։
Այս ինչ՝ գիտեյի վոր այդ կուռքը վոչնչով

մեղավոր չե յուր մոլեռանդ յերկրպագուի
առջև: Նա դուցե չեր ել յերեակայել, վոր
յուր պարզ ընկերական վարժունքը կարող ե
մի պատճնու սրտում առաջացնել այդքան
հասուն, այդքան խորը և ջերմ զգացում...

Սակայն Լեռնն ավելի մեծահողի և լե-
հանձն եր, քան կարող եյի յերեակայել:
Նրա կեղեքվող կրծքեց գտոն հեծկլտանքի
հետ դուրս եյին զալիս միայն այս բառերը.

«Լուիզան պակասություն չունի... Լու-
իզան հրեշտակ ե»...

Յեղել են մոլեռանդներ, վորոնք կրակի
միջից իրանց այրվող ձեռները պարզել են
դեպի վեր, աղոթել աստծուն, վորի անու-
նով նրանք դատապարտվել են այրման:
Այսպես եր և' Լեռնը: Անհուն տանջանքների
բովում նա դեռ պաշտում եր յուր իդեալին,
վորովհետև դա նրա միակ աստվածուհին
եր:

Նա դսպեց հեծկլտանքները, սրբեց

արցունքը, վոտքի կանգնեց, գդակը վերցնե-
լով:

— Պետք եւ չնորհավորել սինյորա
Ստեֆանիային, — ասաց: — Բայց այժմ ուշ
ե... վաղը... Ներողություն, սինյոր, Լու-
իզայի համար չեյի լալիս... Հոգնած եմ...
Գիտեք... դիտեք... Լուիզան զուր և ամուս-
նու հետ գնում Պարիդ... Կավալլարոն գնում
և յուր ձայնն ավելի մշակելու... Լուիզան
յուր ապագան կզոհի նրան... Բայց ի՞նձ
ինչ... ի՞նձ ինչ...

Բանի մի ըստե նրան պաշարեց անձնա-
սիրության և ամոթի զգացումը: Նա շփոթ-
վեց յուր թուլությունից, արտասուքից:
Շփոթվեց այնպես, վոր յերեսիս չեր ուղում
նայել: Վերցրեց մի քանի անդամ մանդովի-
նան աննպատակ, հետ դրեց, գլխարկը ձեռ-
քին սկսեց փնտոել նրան, ծիծաղեց կեղծ,
անբնական ծիծաղով: Վերջապես, ճանկեց
յուր թանձր մազերը, կանգնեց սեղանի մոտ
և կարմրած աչքերը հառեց լամպարի լույս

սին։ Զգիտեմ ինչու, միշտ նրա աչքերը
ձգտում եյին դեպի լույս։ Նա սիրում եր
նայել արեգակի շողերին, լամպարի լույսին,
վառարանի կրակին... Յեզ այդ լինում եր
մանավանդ այն միջոցներին, յերբ նրա մըտ-
քերը պղտորված եյին, նրա հոգին խոռվված
եր...»

Յես տանջվում եյի անզորությունից,
վորովհետև չգիտեյի՝ ինչով միխթարել
մարմնացած տանջանքը։

Լությունը տեսեց յերկար։ Յես անցու-
դարձ եյի անում։ Նա շարունակ կանգնած
եր։ Հանկարծ, չթունքները կրծոտելով,
գլխարկը մի ձեռքով խփեց մյուս ձեռի ա-
փին, շուռ յեկավ և, առանց ինձ հրաժեշտ
տալու, արագ քայլերով գուրս դնաց...»

Մանդոլինան մնաց սեղանիս վրա, կար-
ծես, վշտացած, վոր դարձյալ իրան մոռա-
ցան... Զե՞ վոր Լեռնը յեկել եր նրան տա-
նելու, վոր վաղը նվագի շոգենավի վրա...»

Ինձ պաշարեց զղջման զգացումը. ինչո՞ւ

այլպես չուտ և անզգույշ հայտնեցի նրան
լուրը։ Ով գիտե՞ ուր վաղեց և ինչ կարող ե
անել։ Յերկու անգամ բարձրացա վերեւ և,
դրսից լսելով նրա ձայնը, հանգստացա, հետ
յեկա։ Սկսեցի ինձ միխթարել այն մտքով,
վոր կատարել եմ անկեղծ բարեկամի պարտք,
բանալով Լեռնի աչքերը։ Մտածեցի նաև,
վոր ե՞հ, ինչ և լինի, տասնութ տարեկան
պատանի յե, հաղիվ թե վիշտը նրա սրտում
յերկար ապրի։ Լաց կլինի, լաց կլինի կե-
վոնը՝ կհանդստանա... Մտածում եյի այս-
պես և, միկնույն ժամանակ, զգում, վոր
սխալված եմ...»

Առավոտը դարձնեցի մի անսովոր ծան-
րություն սրտիս վրա։ Շտապով խմելով
մի քաժակ թեյ, գնացի վերեւ։ Լեռնը տանը
չեր։ Ալմաստն ասաց, թե գիշերը, անկողին
պառկելուց առաջ, տվել ե իրան հիսուն
ոուրլի և համբուրվել հետը, թե գրեթե ամ-
բողջ գիշերը նստած ե յեղեւ գրասեղանի
քով, դրեւ և, ջնջել, պատռեւ։ Առավոտը

կրկին համբուրվել են նրա հետ և դուրս դնած
ցել, տանը թողնելով կիթառը, վոր ամէն ոք
հետը տանում եր:

— Նա տխո՞ւր եր, — հարցրի յես:
— Վոչ տխուր, վոչ ուրախ. այնպես եր,
ինչպես միշտ:

Կիթառը տանն ե, մանդոլինան սենյա-
կումս. պարզ ե, վոր նա վո՛չ պանդոկ ե
դնացել, վո՛չ չոգենալ: Ո՞ւր կարող ե լի-
նել: Յես փափաղեցի տեսնել նրան անպատ-
ճառ, հենց նույն ժամին. յես սաստիկ ան-
հանդիսա եցի: Դուրս յեկա, պատեցի թատ-
րոնների շուրջը, անցա յերկու անդամ Դե-
րիբայան փողոցը, ուր յերբեմն Լեռնը
զբոսնում եր: Զիար: Որը կիրակի յեր.
մտածեցի, գուցե հայոց յեկեղեցումն ե.
կիրակի որերը յերբեմն դնում եր պատարադ
լուելու: Այնակեղ ել չեր:

Ալելի քան յերկու ժամ թափառելուց
հետո վերադարձ տուն մտամոլոր: Թվում

եր ինձ, վոր մի բան եմ կորցնում, մի շատ
թանդադին բան:

Դարպասի առջև հանդիպեցի Զառչեն-
կոյին: Նա Լեռնի սենյակից եր գալիս: Նա
ել եր վնասում ընկերոջը, չէիտեմ ինչ-վոր
«կարևոր» գործի համար: Յեղել եր պանդոկ-
ներում, «Խերսոն» շոքենավի վրա, հարցրել
եր. նավաստիները այսոր նրան չեն տեսել:
Պատմեցի նրան պատահածը:

— Ո՛, ունայնություն, — գոչեց բա-
նա: աեղծն յուր սովորական վողեռորու-
թյամբ — յես միշտ ասել եմ, թե սերը գե-
պէ կինը հոգու հիվանդություն ե: Լեռնը
վաղուց ե ինձ խոստովանել, թե սիրահար-
ված ե այդ աղջկա վրա: Ո՛հ, ի՞նչքան եր
խոսում նրա մասին, ի՞նչպես հառաջում...
Դետք ե գտնել նրան, հենց իսկույն... նա
տաքարյուն ե...

Խնդրեցի նրան մի քանի բոպե սպասել
ինձ դրսում: Դնացի սինյորա Ստեֆանիայի

մոտ։ Անշուշտ կեռնն այսոր յեղել ե նրա
մոտ։ չե՞ վոր ուզում եր չնորհավորել նրան։

Յերջանիկ տրամադրության մեջ գտա
Ստեփանիային։ Նա ուրախությունից յեր-
գում եր ու պարում Ռախսայի մոտ այն
բողեյին, յերբ մտա սեղանատուն։ Նա ա-
սաց, թե հրավիրել ե մի քանի բարեկամներ
ու ծանոթներ, թե պետք ե մի լավ զվար-
ձանալ։

— Ա՛ի, սինյոր, այնքան ուրախ եմ,
վոր ուզում եմ բոլորին գրկել ու համբուրել։

«Մի՛ դուցե և ինձ» — ակամա մտածեցի
յես, գրեթե յերկյուղով նայելով նրա սյու-
ների պես հաստ և ուժեղ կռներին։

Կեռնի մասին ասաց, թե առավոտն յե-
ղել ե յուր մոտ, չնորհավորել ե, ձեռքը
համբուրել։

— Նա քաղաքավարի պատանի յե, իսկ
ե իսկ արտիստ։ Կարծես, հայրը վարսավիր
չի յեղել, այլ ջենտլմեն։ Բայց ծիծաղելի
յեր, չեր հավատում կուիզայի ամուսնու-

թյանը։ Հեռագրերը տվեցի, ինքը կարդաց,
մեկ եւ չնորհավորեց, բայց այնպես մտիկ ա-
րավ աչքերիս խեթ-խեթ, ապշած, վոր, կար-
ծես, նոր եր տեսնում ինձ։ Հետո առանց
դես, առանց դեն ասաց։ «Սինյորա Ստեփա-
նիա, մորս սիրեցեք, նա խեղճ կնիկ ե»։ Առ-
հասարակ շատ ոտարոտի յեր։

Այսքանը բավական եր, վորպեսզի իմ
մեջ ծաղեր վատ նախազգացում։ Դուրս դա-
լով փողոց, Զառւշենկոյին հաղորդեցի իմ
յերկյուղը։ Նա առաջարկեց գնալ քաղաքա-
յին թատրոնի կողմերը։ Իցկոն այժմ պիտի
այնտեղ լինի. նա կարող ե գտնել կեռնին։

Իցկոյին հանդիպեցինք յուր հասակի մի
հույնի հետ սաստիկ վեճի բռնված։ Հույնը
կատաղել եր, հայհոյում եր իցկոյին, ան-
վանելով նրան «քոսոտ ջհուղ», «սատկած
առնետ» և այլն։ Իսկ իցկոն միայն կը կնում
եր. «դու ինքդ, դու ինքդ»։

Զառւշենկոն, սպառնալով հույնին գա-
վաղանով ջախջախել նրա դլուխը, ստիպեց

նրան լոել։ Հայտնվեց, վոր վեճը Լեռնի պատճառով եր։ Հույնը Լեռնի մրցակիցն եր թատրոնի վերնահարկում և շվացնում եր այն յերգիչներին, վորոնց նա ծափահարում եր։ Նա Իցկոյի մոտ Լեռնին հայհոյել եր։ Իցկոն պաշտպանել եր բացակա ընկերոջը և վեճի բռնվել։

Յերբ Զառւշենկոն պատճեց ինձանից լսածը, Իցկոն, վերուվեր թռչկոտելով, դոչեց։

— Իհե՛, իհե՛, խեղճ Լեռն...

Նա ևս գիտեր, վոր Լեռնը միշտ յերազում և Լուիզայի մասին, և պատճեց մեզ մի քանի մանրամասներ։ Ի միջի այլոց, ասսաց, թե շատ տիրելիս Լեռնը գնում եր «Ալեքսանդրյան պարկ» կոչված զբոսավայրն ու այնտեղ ծովափի կողմում, մի հեռավոր նստարանի վրա նստում, կիթառը ծնկների վրա դրած, և մտիկ անում նախահամդստից դուրս յեկող շողենավերին։ Քանի՛ քանի անդամ Իցկոն հանդիպել և նրան այդ դրու-

թյան մեջ, և նա ասել եւ «Իցկո՛, յերբ մըտիկ եմ անում մի հեռացող չուզենավի, ինձ թվում ե, վոր յես ել նրա վրա ուրիշների հետ գնում եմ հեռու, հեռու յերկրներ»...

— Գնա՛նք Ալեքսանդրյան պարկ, այնտեղ ե, յերեի, — առաջարկեցի յես։

Տասը բաղեցում հասանք զբոսավայրը, անցանք այդ ընդարձակ այգին յերկայնությամբ ու լայնությամբ, նայեցինք բոլոր ծառուղիները. չկար ու չկար Լեռնը...

Յես վերադարձա տուն հոգնած և՛ փլակիկապես և՛ հոգեպես, թողնելով Զառւշենկոյին և Իցկոյին վորոնել իրանց կորած ընկերոջը...

Վատ նախազգուշացումս ինձ այնքան չտրացրել եր, վոր յես առանց վորեև պատրիվակի հրաժարվեցի մասնակցել սինյոքա Ստեփանիայի այդ որվա ուրախ խնձույթին։ Յես պառկած եյի հաղուստով անկողնավալիս վրա և մտածում եյի Լեռնի և միմիայն Լեռնի մասին։ Նրա տիրուր, հուսահատությամբ լի աչ-

քերն եյի հիշում վերջին բոպեյին և նրանց մեջ կարդում եյի մի փոքրիկ, բայց սքանչելի հերոսի հոգու անհուն տվայտանքը։ Յերեա-կայում եյի նրան յուր թշվառ հոր դրուժյան մեջ։ Հարբած, կեղտոտ, վեր ընկած թատրո-նի դռների առջև, անցորդների ծաղրին ու սրախոսություններին յենթարկված…

Նայում եյի նրա մանդոլինային, սիրոս մորմոքում եր։ Անչունչ գործիքը, կարծես, լեզու յեր ստացել, վողբում եր յուր տիրոջը։ Յես վերցրի նրան սեղանիս վրայից, քաշ ա-րի պատի մի անկյունում, վոր այլես աչքիս չընկնի…

Մի քանի անգամ մատներս դիպան նրա լարերին, և նրանց թույլ հնչյունները հիշեց-րին ինձ այն նշանավոր առավոտը, յերբ Լե-վոնն առաջին անգամ նվագեց «Մարտիդի շրջմոլիկը»։ Թշվա՛ռ շրջմոլիկ, ո՞ւր ես դու այժմ…

Իսկ այնտեղ, հարկան սենյակում ու-տում, խմում, դվարձանում եյին հրավիր-

վածները։ Լսում եյի Ռախմայի ձայնը և սի-նյորա Ստեֆանիայի բարձրաձայն ուրախ ծիծաղը, վոր առաստ-առաստ բղխում եր նրա լայն, առողջ կրծքից… Փոքր առ փոքր նյար-դերս թմրեցին. յես նիբռհեցի, վերովհետոն դը-րեթե ամբողջ դիմեր չեյի քնել… Կեսքուն և կիսարթուն դրուժյան մեջ լսեցի ինչ-վոր դղրդոց։ Վեր թռա անդիցս… գա Լեռնի ման-դոլինան եր, վոր ընկել եր պատից հատակի վրա։ Նույն բոպեյին, յերբ գործիքը նորից քաշ եյի անում պատին, դրաից յսեցի անսո-վոր աղմուկ։ Շտապեցի նախասենյալ և այն-տեղ հանգիպեցի սինյորա Ստեֆանիային յուր հյուրերի հետ։ Նրանց դեմքերն արտահայ-տում եյին դարմացում և յերկյուղ։

— Ի՞նչ ե պատահել, ի՞նչ ե պատահել,— հարցնում եյին միմյանց։

Մեր ընթակարանի մուտքի առջե կանգնած եր այրի Ալբատոսը և ձիոնները տարածած դե-պի ներքե, գոռում եր հրդեհում այրվողի պես։ Յերկու վոստիկան և մեր գասլթագահը

208

բարձրացնում եյին սանդուղով . . . Աւոնին :
Նրանց հետեւից բարձրանում եյին Զառւշեն-
կոն և Իցկոն :

Եայելով Աւոնի թրչված Հազուստին,
Կապտած գեմքին, ամեն ինչ հասկացա . . .
Մնացյալն յերկու խոռօվ պատմեցին Զառ-
շենկոն և Իցկոն :

Աւոնին համել եյին ջրից նավաստիները
«Աերսոն» չողենավի տակից, վոր յերկու շա-
բաթից հետո պիտի տաներ նրան իտալիա . . .

1902թ.

Բագրատ


Պատ. խմբագիր՝ Ռ. Զարյան

Սրբագրիչ՝ Ս. Փարսաղանյան

Գլավլիտի լիազոր՝ Տ—1634 Հրատ. 4605.

Պատվեր 463. Տիրաժ 6000.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Անինի 65.



ՀՀ Ազգային գրադարան



NL0352998

98247

Գիրք 80 կ.
Կազմը 40 կ.

Ширвансаде

АРТИСТ

Гиз Армянской ССР, Ереван, 1978.